Universitäts- und Landesbibliothek Bonn

Patmowt'iwn Tarônoy

Zenob <Glak>

Venetik, 1889

urn:nbn:de:hbz:5:1-11689

Visual Library

Gaussen 3086

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽՆԵԱՑ

ԶԵՆՈԲ ԳԼԱԿ ԱՍՈՐԻ

Ջուսսոն 3086

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՏԱՐՕՆՈՅ

ԶՈՐ ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ԶԵՆՈԲ ԱՍՈՐԻ

Երկրորդ Տպագրութիւն

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄԻ 1889 ԹՎԻՆ

3086

EX BIBLIOTHECA DR IS. GOUSSEN
BONNAE (BIBL. UNIV.)

ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

ԶԵՆՈՒԲՍ այս աշակերտ սրբոյ Լուսաւորչին, և առաջնորդ իննակնեան վանիցն 'ի Նմանէ կացեալ, հրամանաւ վարդապետին իւրոյ՝ որպէս ինքն իսկ պատմէ՝ գրեաց զգիրս զայս առ երիցուն ոմանս յԱսորիս։ Ուստի հաւաստի թուի՝ ասորերէն զսա գրեալ. զի ինքն իսկ և առ որս գրէրն՝ ասորիք էին. մանաւանդ զի և ասորի գրով վարէին յայնժամ մերք։ Եւ պատմէ 'ի սմա զերթ սրբոյ Լուսաւորչին 'ի Կեսարիա, և զձեռնադրել նորա 'ի Ղևոնդեայ եպիսկոպոսէ, զփոխադրութիւն նշխարաց սրբոյ կարապետին, և զիրաց ինչ պատերազմի՝ որ 'ի կողմանս Ցարօնոյ գործեցան։ Արդ զսոյն պատմութիւն նոյն ինքն ապա մատենագիրն և 'ի Հայ բարբառ երևի յեղեալ. քանզի այսպէս 'ի գլուխ գրոցս գրոշմեն գրչագիրք. Պատմութիւն Ցարօնոյ, զոր Ներքմանեաց Զենոբ Ասորէ։ Բայց եթէ զթարգմանելն ոք փոխանակ պատմագրելոյ առցէ, և համարիցի զսա հայերէն գրեալ, և կամ յայլմէ ումեքէ յեղափոխեալ 'ի հայ, ոչ ինչ կամակորէ զիմաստ բառին։ Զի և բազում նմանութիւն գտանեն քընողք ընդ տիպս կերպարանաց բանից սորա և Յովհաննու Մամիկոնեանի. որով և ոչ վրիպեսցի ոք թերևս զնա կարծել թարգմանիչ գրոցս այս։

Որպէս գրեթէ ամենայն շարադրածք 'ի ձեռն գրչագրաց հասեալք առ մեզ, ևս առաւել սա ժամանակաց

երկայնութեամբ աղաւաղեալ գտանի։ Այլ մեք 'ի սուս-
գագոյն օրինակաց զտպագիրս զայս արարաք, հնգեակ
օրինակաց բաղդատութեամբ ըստ կարի ուղղագրեալ։
Ուրեք ուրեք էին և հատուածք ինչ, որ թէպէտ յերիս
և 'ի չորս օրինակս պակասէին, այլ մեք ոչ թողաք զայնս
'ի բաց. որպէս զի մի զրկեսցին հնախոյզք մերոյ աշխար-
հիս 'ի տեղեկութեանցն՝ որ 'ի նոսա։ Մանաւանդ զի
երևի ուրուք 'ի յետնոց զհատուածսն զայնոսիկ կրճա-
տեալ՝ ագահելով 'ի ժամանակն և 'ի մագաղաթ, և այ-
լոց ոմանց գրչաց 'ի նմին օրինակէ փոխագրեալ. որպէս
և այլ երկք հնոց յաճախ իսկ զնոյն արկածս կրեցին 'ի
պղերգութենէ գրչագրաց։ Բայց թէպէտ և համարիցին
հատուածքն այն յետոյ յաւելեալ, ոչ յետնոյ ինչ ու-
րուք թուին յաւելուածք, այլ կամ նորին իսկ մատե-
նագրին, և կամ ուրուք 'ի յաջորդաց նորա, 'ի նորին
վանիցն առաջնորդաց։

(1832)

ՁԵՆՈՒԱՅ ԳԼԱԿԱՅ

ԱՍՈՐԻՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՐՕՆՈՅ

Պատճէն առաջին սրբոյն Գրիգորի զոր առաքեաց
'ի Կեսարիա առ Ղեւոնդիէ։

ԶԱՌ Ի ՎԵՐՈՒՍ պատուեալ և 'ի մարդկանէ գովեալ, երիցս երանեալ տեառն և աստուածարեալ սրբոյ հայրապետիդ Ղեւոնդեայ, մեծարդոյ [1] և պատուական հոյակապ քաղաքիդ Կեսարեան քահանայապետ, առ 'ի ձեր սրբոյ ձեռնադրութենէդ և 'ի մեր փանաքիմացութենէս առաջին թուղթ՝ ողջունիւ և սրբութեամբ հասցէ ձերում փառաւորութեանդ, և ապա բոլոր տիեզերաց։

Յոյժ գոհանամք զաստուծոյ, որ հայրախնամ ողորմութեամբն իւրով գթացաւ յաղագս մարդկան իջմամբ Որդւոյ իւրոյ միածնի. որ զամենայն ազինս հրաւիրեաց յերկնային քաղաքն 'ի ձեռն առաքելական քարոզութեան, յորում այսմ աշխարհի կարի առաւել մասն պարծանաց եհաս։ Զի երկոքեան ամոլքն աստ եկեալք, և սորին սահմանի վիճակի՝ Հոգւոյն բանիւ 'ի ձեռն նորին շնորհաց. որ թէպէտ և առ նոքաք վերջացան 'ի 'ի ճշմարտութենէ, սակայն կամք ողորմութեանն աստուծոյ գթացաւ առ մեր նուաստութիւնս. ըստ որում և գործեաց զքանչելիս 'ի մերում ժամանակի, որ զօրի-

1 Յերկուս օրինակս Մեգաղ։

նակն դուք 'ի մեզանէն իսկ լուայք և ծանեայք։ Մանա-
ւանդ կրկին գոհութիւն ձեւք աստուծոյ մատուցանեմք,
առաւել և ձեզ օրհնութիւն, զի զդանձն կենաց շնոր-
հեցէք երկրիս Հայոց, զմիջնորդն աստուծոյ և մարդկան
զնշխար սրբոյն Յովաննու Մկրտչին. որով և ցնծայ յոյժ
երկիրս Հայոց սորա գալստեամբս, որպէս և անդ Քրիս-
տոսի գալստեամբն 'ի Յորդանան։ Եւ զայս գիտութիւն
ստուգիւ ձեզ ծանուցանեմք, զի որպէս Քրիստոսի ին-
մամբն 'ի ջուրն՝ մահ կորեաւ, նոյնպէս և սատ 'ի սորա
գալստեանն՝ դժոխոց դրունքն խորտակեցան։ Զի է սատ
յերկրիս Հայոց 'ի չորրորդ բաժինս և յերրորդ Հայոց ա-
ւարտին, 'ի լերինն՝ որ կոչի Տաւրոս, և հատեալ անցա-
նէ [1] մինչև 'ի դրունս Պալհաւայ Պարսից. և առ սովաւ
բնակի երկիրն մամիկոնէից, բաղում վայելուչ տեղք,
և ծառատունկ պիտոյից. որ և սատ իսկ որջացեալ էր
մահ յերկուս տեղիս [2]։

Եւ այնչափ որջացեալ էր 'ի միում վայրի, մինչև 'ի
սրբոյ Հոգւոյն յայտնեալ՝ եթէ նա իսկ է դրունք դժո-
խոց, զոր ինն ակնեան կոչեն տեղոյն հնդիկք և պարս-
իկք։ Յոր պանծային յոյժ բնակիչք երկրին վասն Գի-
սանեայ կռոցն, և նորին եղբօրն Դեմետրեայ. ուստի
յոյժ բուն եալ էր սատանայ 'ի նոյն։ Կործանեցաք ըզ-
պատկերն սատանայի, և եդաք 'ի նոյն տեղոջ մատրա-
նի [3] զնշխարս սրբոյ կարապետին Յովաննու և Աթանա-
գինեայ վկայի, ուստի 'ի վայր կործանեցաւ մահ իւրով
կարողութեամբն, և այժմ աստուած երկրպագեալ պա-
տուի։

'Ի նոյն ինն ակնեան տեղւոջն թողի զերկոսին կենդա-
նիսն զԱնտոն և զԿրօնիդէս, զորս դու ըստ սիրոյ քո ըն-
ծայեցեր զնոսա աշխարհիս Հայոց։ Որոց և եդեալ իսկ
են զիւրեանց մարմինս կենդանի 'ի խաչ ելանել ընդ
Քրիստոսի վասն այլոց օգտի մտաց 'ի մարմնի. զոր իբրև
զանգիւտ մարգարիտս համարիմ զնոսա տուեալ ինձ։
Այլ ըստ սիրոյ մտերմութեանդ քո զոր ունիս առ մեզ,

1 Յերկուս օրինակս անց է։
2 Ի չորս օրինակս առ սովաւ բնակի յերկրին կամ երկիրն մամիկոնէից. Ե առ բաղում վայելուչ կոյ տեղք, կոյ յերկուս տեղիս։
3 Յերկուս օրինակս մատրանայ։ Միւս այլ մատանի։

աղաչեմ զի մի ևս ընձայս այլ մատուցանես ինձ։ Զի հունձք բազումք են և մշակք սակաւք. այլ աղաչեմք ըզ-ձեզ, զի հանցես մշակս 'ի հունձս յայսոսիկ։ Յորոց մին մշակն, զոր խնդրեմք 'ի քէն, եղիազարոս է. և միւսն՝ եղբայր Յակոբայ ասորւոյ [1], զոր ընդ իս ածեալ՝ ձեռ-նադրեցի եպիսկոպոս մամիկոնէից տանն։ Արդ և զդա յղեսցես, հանդերձ այլ մշակօք, մանաւանդ և զՅիմա-թէոս ագդենացւոց եպիսկոպոսն յղեսցես. զոր դու իսկ գովէիր զհմտութիւն դպրութեանն, որ էր յոյժ իսկ պի-տանի երկրիս մերում՝, օգնականութիւն գտեալ 'ի քէն աղօթիւք և խրատուց։

Ուստի և յարաժամ ճգնութեամբդ բազմաց օրինակ գոլով, և դաստիարակ ելով շնորհիւ տեառն, ողջ լիցիս բաւական բազմաց օգնականութեան 'ի տէր, և մերոյ բարեխօսութեամբս. ամէն։

Պատճէն երկրորդ. պատասխանի գրոց սրբոյն Գրիգորի, զոր յղեաց Կեսարու հայրապետն 'ի ժամ վախճանի իւրոյ։

Երջանիկ և աստուածարեալ Տեառն եղբօրդ.

Եհաս առ մեզ սուրբ և ուրախարար գիր քո, և յոյժ անթերի ուրախութեամբ լցոյց զվշտադնեալ անձն իմ։ Որ թէպէտ վասն տրտմութեանս հասանելոյ 'ի վշտի էի, սակայն շարժեալ զմեր դանդաղութիւնս ձեր գոհու-թեան նամակն. զոր ընթերցեալ՝ գոհութիւն մատուցի աստուծոյ ըստ գրեցելոյ 'ի քէն, որ ոչ անտես արար աստուած զաղգս հիւսիսական. որք զրկեալք բազում ժամանակս 'ի ճշմարտութենէն, զմոլորեցուցիչս իւ-րեանց աստուած համարէին։ Եւ զայն ուսոյց նոցա հա-կառակամարտն ճշմարտութեան սատանայ. զի ընդ խաւար ընթացեալք, զրկեալք լինէին յաստուածա-ծանօթութեանցն։ Այլ'ի դէպ եկեալ նոցա մարգարէին

[1] Յերիս օրինակս զոր օծեալ յԵռնադրեցի եպիսկոպոս՝ եղբայր Յակոբայ ասորւոյ և այլն։

բան, թէ «Ժողովուրդ որ նստէր 'ի խաւարի՝ տեսին զլոյս մեծ աստուածգիտութեան»։ Որ թէպէտ 'ի վաղ իսկ ծագեաց արեգակն արդարութեան ընդ արարածս, սակայն ազգքդ.քո 'ի տունջեան իբրև 'ի գիշերի զորմ խարխափեալք[1]։ Ուստի և այժմ դեռ հայեցաւ 'ի դոսա աստուած, և էջ փրկել զդոսա 'ի ձեռաց անմարմին փարաւոնի. զի վերագոյն գտար տանջանօք քան զՄովսէս՝ ոչ խնայելով 'ի մարմինդ.քո, մինչև ազատեալ հաներ յանապատն Սինա յանկոխն դազանաց, ուստի հալածական լինէին ցաւք և հեծութիւնք։

Եւ արդ.քանզի.քև ծագեաց արեգակն արդարութեան Քրիստոս 'ի դոսա, և դու ընդրեցար 'ի տեղի ընդրելոց սրբոց առաքելոցն Բարթողիմէոսի և Թադէոսի, յիշեա զնոցա նահատակութիւն, և մի երբէք վերջասցիս 'ի շաւղաց նոցա. զի և չիք ինչ պատճառս, զի ետ զդոսա տէր, 'ի շինել և ոչ 'ի քակել. քանզի և 'ի ս'լիզբն իսկ է մուտ կարապետիդ յաշխարհդ Հայոց։ Որ և զիմ՝ անուանս գրեսջիր 'ի քո դպրութեանդ. և գրեսցես, զի և այնու մասն օրհնութեան ընկալայց յետ քո։

Այլ և խրատ բարեաց տամ ձեզ. զիննակնեան տեղիսդ, զոր բարերուզիս ասեն ոմանք, չինեսջիր զդա բընակութիւն դասուց կրօնաւորաց։ Եւ կացուցանես ըզդոսա ըստ օրինակի այսր կրօնաւորացս, զոր տեսեր 'ի մերում վիճակիս. զոր և 'ի սրբոյն Անտոնէ ուսցիս ըզկարդ ճգնութեանն, զի ոչ իւիք պակաս է քան զառաջինն Անտոն։ Զոր և ես.քեզ օգնութիւն համարիմ զայն. զի զեպիփան աշակերտ սրբոյն Անտոնի հաւանեցուցի գալ 'ի նոյն ինն'նեան տեղին, ունելով ընդ ինքեան ընդիրս արս քառասուն՝ ճգնաւորս խարազնազգեստս, պարկեշտ վարուք և հրաժարեալս յաշխարհէս. զոր առեալ կացուցանես զեպիփան՝ դոցա և այլոց եղբարցդ վերակացու։ Եւ դրոշմեսջիր արձան յաւիտենից, զի մի ոք 'ի դաստակերտս կամ 'ի գիւղաքաղաքս զօրէն աղէքսանդրացոցն գործեսցէ, չինելով իւրաքանչիւր ումեք զտէրունական տաճարն, և առանձինն բնակել։ Եւ ժողովեսցես 'ի նոյն տեղի հարեւր արանց չափ, որոշեսցես

1 Յերիս օրինակս խարխարէալ։

'ի նոսա գեւզս և աւանս մեծամեծս, որպէս զի պէտք վանացն 'ի նոցանէ վճարեսցի, և ինքեանք միայն աղօթից և ճգնութեան պարապեսցին։

Խրատեա և զիշխանսդ զայդոսիկ՝ լինել եկեղեցազարդս, աղքատասէրս, կրօնաւորասէրս և երկիւղածս։ Իսկ զշինուածս մատրանն մի շինեսցես բնակութիւն կրօնաւորացդ, այլ կացուսցես 'ի նմա քահանայս և քորեպիսկոպոս։ Որոշեսցի նմա դաստակերտս, և շինեսցես 'ի նմա աղքատանոցս. որպէս զի որք գայցեն 'ի բժշկութիւն, մի լիցի տրտունջ. որպէս առ դրան խորանին ննջեցուցանէին զուխտաւորսն։ Զայս ամենայն ըստ այսմ՝ օրինակի տուր գործել։

Այլ վասն Տիմոթէի և Եղիազարու եպիսկոպոսացն, զոր յինէն աղաչանօք էիր խնդրեալ, նոքա յայնժամ էին գնացեալ՝ մինչ դեռ զբագինսն կործանեցեր, և մեզ հարցման պատասխան[1] էիք արձակեալ։ Քանզի Եղիազար գնաց 'ի քաղաքէ իւրմէ փախստական, զի յարեան[2] 'ի վերայ հերեսիոմտաչքն և հալածեցին զնա 'ի կողմանս Հռոմայ։ Իսկ զՏիմոթէոս լուայ թէ գնաց 'ի կողմանս Երուսաղէմի վասն աւետարանին թարգմանելոյ 'ի հելլենացի գիր։ Եւ ես իսկ 'ի ցաւս մահու անկեալ կամ, և ոչ գիտեմ զկենացս յերկարութիւն. և վասն այսորիկ դանդաղիմ իսկ և գրել առ նոսա թուղթս։ Բայց դուք գրեցէք առ նոսա զնշան արանց[3] ձերոց և զտեղացդ վայելչութեան։ Եւս առաւել ստուգիւ գրեսջիք՝ եթէ զինչ էր պատերազմն ձեր և քրմացն, մինչ երթայիքն 'ի մէնջ։ Դարձեալ ցուցցես[4] զնշխարացն վայրս ծածուկ գրով, զի մի թերութիւն լինի լսողաց՝ կարծելով եթէ երևեալ[5] ես չեն։

Այլ զմէնջ եթէ գիտել կամին զորպիսութենէ, մահու ակն ունիմք և կենաց վճար։ Բայց թէպէտ և արտաքին մարդս մեր ապականի, սակայն ներքինն զնորոգումն կենաց ակսանի։ Եւ զմեր պակասութիւնս տացէ տէր աստուած ձեզ, զի զանձամբ առեալ հօտդ 'ի

1 Ցերկուս օրինակս պատասխանի։
2 Ցերկուս օրինակս Ա յարէան։
3 Ի չորս օրինակս ընչանքանէց յերոց։
4 Ցերկուս օրինակս ցոցցէք, յայլսում ցոցցէք։
5 Օրինակ մի բերբեալ։

բանաւոր փարախդ վերին Սիոնի փոխարկել. որով և աղօթիւք քոյովք և 'ի մեր հօտս խնայեսցէ Քրիստոս. զի յերևել հօտապետին, առցուք և մեք վարձս ընդ առաջին մշակացն։ Ողջ լերուք 'ի տէր։

Եւ իբրև դարձան պատգամաւորքն առ սուրբն Գրիգորիոս, ոչ գտին զնոսա 'ի Ցարօն. այլ անցեալ գնացին 'ի կողմանս Հաշտենից՝ յարարատեան գաւառն 'ի Վաղարշապատ քաղաք. և հանեալ զնամակն մատուցին առաջի ժողովրդեանն։ Ուր ընթերցեալ, տրտմեցան յոյժ հանդերձ թագաւորաւն. առաւել վասն հալածանացն Եղիազարու, և հեռանալոյն յերկրէն իւրեանց։

Եւ գրեաց ինքն թագաւորն և գահերէց իշխանքն [1] չորեսին յեղիազարն Նիւսարացոց եպիսկոպոսն և Տիմոթէոս ագդենացոց եպիսկոպոսն օրինակ զայս։

Ցեռաւն սիրեցեալ եղբարցդ, և հեռացեալ մշակացդ վասն բանին կենաց, 'ի տէր ողջոյն ասեմք հանդերձ Տրդատաւն և ամենայն իշխանօքս։

Ամենայն ոք, որ զաստուածային մշակութիւնն յանձն առնու, հալածական [2] պարտ է լինել. զի ոչ առ ամենեսեան ընդունելի է նորա քարոզութիւնն։ Որպէս այժմ զձէնջ իսկ լուաք, զի ելեալ 'ի ձերմէ բնակութենէդ. յանձն առէք լինել օտար 'ի վայրուց և ծանօթից, ոչ ինչ զմտաւ ածելով զպանդխտութեան ժամանակս։ Այլ դէմ եղեալ գնացէք, և ոչ գիտէք յով չոգայք։ Արդ վասն պանդխտութեանդ երանեմք ձեզ. իսկ վասն իմաստութեանդ, ոչ։ Զի մինչ գիտէիք զթագաւորս քրիստոսական հաւատով լցեալ, և զաշխարհս յաստուածպաշտութիւն, յօտար և 'ի տարադէմ երկիրդ ընդէր եղէք հալածական. մանաւանդ զի գիտէիք, եթէ ամենայն գաւառացս եպիսկոպոս պիտոյ են և քահանայս։ Զի թէպէտ ոմանք, որք ուստեք ուստեք եկեալ են ժողովեալ, բայց զինչ են այսոքիկ առ վեցհարիւր և քսան

1 Ցերիս օրինակս Իշխանն, յայլսում՝ լրբէին գահերէց Իշխանօքն։
2 Ցերկուս օրինակս հալածեան, յայլսում՝ 'ի հալածեանս։

դաւառս Հայոց. որ և դաւառին մէն մի քահանայ կամ երկու լուկ թէ հանդիպի։ Զի դեռ մանկունք երկրիս 'ի դպրոց են, և ոչ ոք 'ի նոցանէ բաւականս քահանայութեան։ Իսկ դուք զայդչափ բազում քահանայս առեալ՝ տարադէմ և հեռի ուղեգնացութեամբ ետուք զձեզ, և արդ 'ի ձերում երկրիդ այլ չունիք դառնալ։

Ապա աղաչեմք զձեզ, 'ի մէնջ մի վերջանայք. այլ ամենայն վստահութեամբ փութացարուք դալ զկնի արանցդ, զոր յղեցաք առ ձեզ։ Եւ եթէ գայցէք, զամենայն երկիրդ եկեղեաց և Հարքայ ձեր առաջի առնեմք. յոր վիճակ և բնակեսջիք՝ ձեր եղիցի և որք զկնի ձեր, որչափ կենդանի էք դուք և մեք։ Իսկ երկիրն մամիկոնէից եթէ հաճոյ թուեսցի ձեզ, որպէս և դու իսկ ասէիր՝ եթէ զիննակնեան տեղիսն ինձ տուր, և անդ զքո եղբայրն իսկ եմ ձեռնադրեալ եպիսկոպոս, և ըստ կարի աղաչանաց զանուն տեղւոյն փոխեցաք յիւր աւելի անունն։ Եւ այնչափ ջերմագոյն է 'ի սպասաւորութիւն սուրբ կարապետին, մինչ զամենայն շինուածս վանացն քարևկիր է եղեալ. և թուի ինձ՝ թէ մինչև 'ի մահ ումեք չկամի տալ։ Այլ մեզ ոչ է արժան առնուլ 'ի նմանէ, զի աշխատեալ է առանց այլոց սատարութեան. ինքն շինեաց զեկեղեցին, զոր ես միայն հիմնարկեցի։ Սակայն եթէ ինքն տացէ, 'ի մէնջ լիով է, զի այլ ևս յաւելում 'ի դաստակերտս։ Ապա եթէ զայն ոչ, սակայն ամենայն երկիրն առաջի ձեր է. զոր և տեսանէք տեղի վայելուչ, այն ձեզ. յորմէ ոչ ինչ պակաս գտանէք 'ի մէնջ քան զասացեալն։

Ողջ լերուք 'ի տէր։

ԱՌԱՔՈՒՄՆ ԹՂԹԻՆ

Եւ առեալ տարան զթուղթն առաքեալքն այնոքիկ, որք 'ի կեսարիայն եկին. և տարան 'ի մէնջ [1] 'ի յՈւրհա և 'ի կեսարիա, և դարձան՝ և ոչ գտին անդ։ Եւ անտի ելեալ գնացին յԵրուսաղէմ. և չհանդիպեալ նոցա, տեղեկացան 'ի նոցանէ՝ եթէ 'ի Հռոմ գնացին երկոքեանն։ Եւ իբրև նոքա 'ի Հռոմ գնացին, եղիազար 'ի Միջա-

1 Օրինակս մի մինչ։

գեաս Ասորոց էր գնացեալ վասն թարգմանութեան երկոտասան մարգարէիցն։ Իսկ Բեկտոր և Անաստաս և Գայիոս եպիսկոպոսքն իբրև տեսին ըզթուղթն, յոյժ ուրախ եղեն և խնդացին. քանզի նոքա հալածական շրջէին զկնի եղիազարու։

Եւ փութացեալ գրեցին զնոյն բանսն յայլ նամակ, և յուղարկեցին առ Տիմոթէոս 'ի Կորնթոս. և կոչեցին ընդ նմա և զԱքիկոս սարկաւագն, որ յոյժ հմուտ էր բազում դպրութեան. և ինքեանք եկին 'ի Միջագետս, և ոչ գտին անդ զեղիազարոս։ Ապա դարձան յԵրուսաղէմ. միւս պատճառ՝ վասն նորա, և միւս՝ վասն քննութեան աղանդոյն Մենանդրէի. որ և յայնժամ բազումք դեռ ունէին զնորա պղծութիւնն։ Իբրև գնացին անդ, զեղիազար ոչ գտին. և 'ի նոյն աւուրն վախճանեցաւ Երուսաղէմի հայրապետն. զոր հաճոյ թուեալ երուսաղեմացւոցն, առեալ ձեռնադրեցին զԳայիոս Երուսաղէմի հայրապետ. և Բեկտոր և Անաստաս դարձան 'ի Կեսարիա։ Իսկ եղիազար եկեալ, 'ի ճանապարհին հանդիպեցաւ սրբոյն Գրիգորի և Տրդատայ. և խընդացեալ յոյժ դարձաւ զկնի նոցա մինչև 'ի Հռոմ քաղաք։ Եւ անդ կացեալ բազում աւուրս, ապա խնդրեաց 'ի Նշխարաց սրբոց առաքելոցն մասն ինչ, զահեակ ձեռն Անդրէի առաքելոյն և Ղուկասու աւետարանչին։ Զոր առեալ, մեծաւ խնդութեամբ դարձան յաշխարհն Հայոց. և Տրդատ անցեալ գնաց յաշխարհն իւր յարաբատեան քաղաք։

Իսկ սուրբն Գրիգոր մնաց ժամանակս ինչ 'ի Տարօն՝ ընդ իւր ունելով զնշխարս սուրբ առաքելոցն. դադարեալ աւուրս քսան և հինգ 'ի վանս Գլակայ յիննակնեան տեղիսն Գիսանեայ կռոցն, 'ի կայեան նշխարաց սրբոյ Կարապետին։ Եւ առաքեաց զիշխանս մամիկոնէից տանն, տեսանել տեղի վայելուչ և լեռնաբնակ. զոր երթեալ խուզեցին աւուրս բազումս, և ոչ գտին տեղի պատշաճ 'ի յամենայն գաւառսն, և դարձան ունայն։ Իսկ սուրբն Գրիգոր հրամայեաց պաշտօնէիցն աղօթք առնել յերեկօրեայ. և ինքն մտեալ յեկեղեցին, տարածեաց զձեռս իւր առաջի նշխարաց սրբոց առաքելոցն և առաջի տապանի սուրբ Կարապետին, և խնդրեաց յաստուծոյ այսպէս.

Տէր աստուած բազմագութ և ողորմած, որ քննես զիրաւունս և պարգևես զողորմութիւն. որ յիշեցեր զաղ-գըս մարդկան զմոռացեալս 'ի գթութեանց քոց, և ոչ բարկացար 'ի սպառ, և ոչ անտես արարեր յաւիտեան. այլ կարդեցեր զիս 'ի պաշտաման քահանայութեանս այսմիկ, և եռուր մեզ ժամանակ՝ հատուցանել իրա-ւունս առաջին հարցն մերոց, որք դիմադարձ գտան սուրբ աւետարանին քարոզութեան։ Որոց տիրեաց մահ մեղաց և կորուստ ապականութեան, և ըմբռնեալ մա-հու՝ կապեաց զամենեսին ընդ անիծիւք, արժանացու-ցեալ զնոսա դժոխոց կայանին. զորս հաւանեցու-ցեալ չարն մնալ յունայնութեան իբրև 'ի ճշմարտու-թեանն։ Իսկ մեզ շնորհեցեր ծանօթս լինել անուանդ քո, և ժառանգ արքայութեանդ երկնից ընդ սրբոց ա-ռաքելոցն. և արարեր խաղաղութիւն առ հեռաւորս և մերձաւորս գալստեամբ միածնի քո, և քարոզութեամբ սուրբ առաքելոցն, որք բաժանեցին զամենայն արա-րածս շրջագայութեամբ աւետարանին։ Ա.ռաւել զորս յայսմ աշխարհի արարեր զկամս ողորմութեան քո 'ի ձեռն սուրբ կարապետին, որ բաժանեաց իւր մարմնո-վքն զամենայն աշխարհս։ Մանաւանդ զի առաւելա-պէս գթութիւնդ քո հաճեցաւ բնակիլ 'ի տաճարս յայս-միկ, որ առաջին հիմնարկութիւնն շնորհեցաւ ինձ յակ-նարկութենէ քումմէ՝ առնել 'ի տեղւոջս յայսմիկ, յոր հիմն հաստատոյս մերոյ խարսխեալ մնասցէ անդրդուելի մինչև 'ի վերջին օրն՝ յորժամ գաս և նորոգես զսա ան-ապական, դու տէր։ Եւ միջնորդ է սա աստուերի և ճշմար-տութեան, և դարձեալ նստելոց է սա ընդ աջմէ միած-նի քո 'ի փառս անճառելիս։ Դու, տէր զօրութեանց, հայեաց յերկնից 'ի պատրաստ բնակութենէ քումմէ, և յայտնեա տեղի բնակութեան նշխարաց սրբոց առա-քելոցն քոց 'ի յերկրիս յայսմիկ 'ի գովութիւն մեծի տէրութեանդ և 'ի պատիւ աստուածութեան քո, 'ի փառս ամենասուրբ երրորդութեանդ։

Եւ իբրև կատարեաց զաղօթսն, յայտնեցաւ նմա հը-րեշտակ տեառն և ասէ. Ցարուցեալ երթիցես 'ի ստոր-ոտ լերինն Ցաւրոսի, և ցուցից քեզ տեղի՝ ուր հաճե-ցաւ տէր բնակիլ սրբոցդ։ Եւ նորա խնդութեամբ ար-

տաքս ելեալ՝ էառ զնչխարս սրբոց առաքելոցն, և գընացեալ 'ի նոյն տեղի՝ ուր եցոյց նմա հրեշտակ տեառն. և աղօթեալ 'ի տեղւոջն, ետ պատրաստել զնիւթ շինուածոյն սուրբ վկայարանին. և եդ անդ զբերեալ մասն սուրբ առաքելոցն։ Եւ կարգեալ անդ պաշտօնեայս եկեղեցւոյն արս երկոտասան, և ետ զտեղին զայն եղիազարու, և անուանեցին զնա Եղիազարու վանք։ Եւ տօն մեծ կատարեալ 'ի տեղւոջն զօրն բնակութեան սրբոցն՝ հանդերձ աշխարհախումբ ժողովովքն, յորում բազում բժշկութիւնք եղեն։

Արդ 'ի սոյն ժամանակս Բեկտոր և Անաստաս 'ի Բուզանդիա հանդիպեալ ոմանց՝ որք յԱշտիշատն Տարօնոյ էին, անդ երթեալ տային նոցա զրոյց զառաջին պատերազմէն՝ մինչ դայր սուրբն Գրիգոր 'ի Տարօն, և թէ զիա՛րդ դարձան նոցա ընդդէմ քուրմքն՝ որ 'ի տեղիսն Գիսանեայ։ Նոյնպէս և զերկրորդ պատերազմն՝ որ եղև ընդ Տրդատ և ընդ իշխանն Հիւսիսոյ. զոր ցոյնք լուեալ զարմացան ընդ քաջութիւն արքային Հայոց Տրդատայ։ Զայս ամենայն իբրև լուան Բեկտոր և Անաստաս և Աքիւղաս և Մարկեղիոս, զարմացան. զտեղի առեալ անդ աւուրս ինչ, գրեցին թուղթ առ սուրբն Գրիգորիոս օրինակ զայս.

Սրբազան և աստուածարեալ և փառաւորեալ հայրապետիդ Հայոց մեծաց ողջոյն 'ի տէր։

Զառ 'ի սրբոյ հայրապետէդ անթերի սիրով և հոգեխառն մտերմութեամբ զպատուական աջոյ գիր ընթերցաք 'ի Հռոմ քաղաքի. և յոյժ ուրախութեամբ լցեալ՝ գոհացաք զաստուծոյ, և կամեցաք զկնի կոչնակացդ[1] գալ։ Այլ պատճառ արգելմանս մերոյ Եղիազար եղև, որ 'ի Միլիագեաս շրջէր. զոր, եկեալ 'ի Հռոմայ, ոչ գըտաք զնա անդ։ Ապա հարկ եղև վասն նորա և վասն տեղեացն Երուսաղեմի երթալ առ սուրբն Սիմաքոս. զոր ըստ աստուծոյ տեսչութեանն զԳայիոս ե ուսաղէմի հայրապետն ձեռնադրեցին փոխանակ նորա, որ

1 Ցերկուս օրինակս կոչնականդ։

վաղճանեցաւ։ Եւ մեք աւասիկ եմք 'ի Բիւզանդիա. վասն զի ագդենացոց եպիսկոպոսն գնացեալ է յԵգիպտոս, և ոչ ունի համոզել[1] զնոսա 'ի խաղաղութիւն որք հալածական արարին զմեզ։ Քանզի գրեալ է առ մեզ, եթէ զքաղաքս ետուն ագդենացիք 'ի յիմ ձեռս, բայց նիւատրացիքն ընդդէմ դարձան. արդ մնացէք դուք 'ի Բիւզանդիա, մինչև ես յայլ քաղաք երթամ։ Արդ մեք վասն այդր դանդաղիմք գալ. զի երկիրդ հեռի է, և մեք անկար 'ի նուազ կենացս և 'ի պանդխտութենէ, և Բեկտոր տանջի 'ի ջերմութենէս, և սուրբն Մարկեղէս ասա վատեալ է յաչացն։

Բայց արդ աղաչեմ զքեզ, երջանիկ մշակդ աստուծոյ, զի հրամայեսցես միում 'ի պաշտօնէիցդ քոց՝ մեզ գրով առաքել զրուցատարութիւն ձերում ճանապարհորդութեան, և զգալն յերկիրդ Հայոց, և զառաջին պատերազմն՝ որ 'ի քրմաց անդի, և զերկրորդ գալն 'ի Հռոմայ, և զայն պատերազմն՝ որ 'ի հիւսիսականաց անդի, և զնշխարացն՝ զոր տարեալ ես՝ եթէ ուր եդեալ ես, կամ զոր պաշտօնեայս թողեալ ես առ նա. և եթէ ումեք յայտնի, որպէս ասեն ոմանք, թէ ոչ. և զկրօնիդէս և զԱնտոն ուր ես թողեալ, որով պարծին եկեղեցիք նոցա սրբութեամբ. և կամ թէ զինչ եղև Եպիփան աշակերտ նոցա, և կամ ուր Եղիազար և Զենոբ[2]. Զայս ամենայն ստուգիւ գրեսջիր առ մեզ, աղաչեմք. և զի յերթալն մեզ առ Տիմոթէոս եպիսկոպոսն[3], մարթասցուք տեղեկացուցանել զնոսա գրով։ Այս ամենայն մեզ պիտանի է, և ձեզ ոչ դանդաղելի։ Եւ շնորհք սուրբ հոգւոյն մնասցէ 'ի վերայ հաւատացելոցդ։

Եւ իբրև ընթերցաւ զթուղթն սուրբն Գրիգոր, հրամայեաց Զենոբայ Ասորւոյ[4] գրել զառաջին պատերազմն և զերկրորդն ստուգիւ, և զնշխարացն՝ թէ ուր եդաւ, և զԱնտոն և զկրօնիդէս՝ թէ որպէս վարին, կամ ուր են։ Բայց յականէ յանուանէ, ասէ, զնշան բլրոցն և զլերինն և զարանցն, որ 'ի պատերազմին գրգռեալ՝

1 Օրինակ մի համոզել։
2 Օրինակ մի Եղիազար եղբայր Զենովբայ։
3 Օրինակ մի յաւելու և առ մեծն Անդիպատրոս։
4 Օրինակ մի Զենոբայ եպիսկոպոսի։

զկուռան ոչ տային կործանել. զայս ամենայն պատմութիւն գրեսցես և առաքեսցես։ Իսկ Զենոբ աղաչէ ընկիզբն առնել պատմութեանն նախ 'ի մահուն Խոսրովայ, և անտի ոճով գրել զամենայն։ Զոր ոչ հաւանեցաւ սուրբն Գրիգոր, այլ բաւական համարեցաւ զայն միայն գրել։ Զի ոչ է, ասէ, օրէն զայդչափ պատմութիւն [1] յԱսորոց թուղթն գրել, և յիշատակ Հայոց ոչ թողուլ. այլ միայն զոր ինքեանք խնդրեցին, զայն յուղարկեսցես գրով։ Զոր հաւանեալ Զենոբայ, առեալ գրեաց առ եպիսկոպոսս Ասորոց միայն լոկ զոր ինչ առ իւրեանց սահմանօքն գործեցան [2]։

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԶԵՆՈԲԱՅ

ՅՈՒՅԱՆԵԼ ԶՊԱՏՃԱՌ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՆ

Ցեառն և սիրելի երջանիկ եպիսկոպոսացդ, 'ի Զենոբայ յանարժան ծառայէ առ ձեր սրբութիւնդ, և հայաստանեայցս յոյժ սիրով ողջոյն 'ի տէր։

Յորժամ պատուական աջոյ ձեռին ձերոյ գիր ընթերցաւ առաջի սրբոյ հայրապետիս Գրիգորի, անթերի ուրախութեամբ գոհացաք զաստուծոյ, զի դադարեաց հալածանքդ 'ի կողմանցդ յայդցանէ։ Եւ իսկոյն ձեռն 'ի գործ հրամայեաց արկանել պատճէնին պատասխանոյ, որչափ և հարցման ձերոյ էր գիր։ Զոր թէպէտ և ոմանք արգելուլ հրամայեցին՝ չգրել պատասխանի վասն ձեր գալոյ, սակայն նա ոչ այնպիսի ածեալ զմտաւ, այլ աննախանձ զձեր պատասխանիսն յիշել։

1 Յերկուս օրինակս պառաջին պարմանիանն։
2 Օրինակ մի որ ինչ առ վանաց սահմանին գործեցաւ։

Եւ դուք մի՛ ինչ աղարտէք զսակաւ պատմութիւնս, կամ եթէ Ագաթանգեղոս զայդ ոչ յիշէ. զի ես յառաջագոյն գրեցի քան զնա [1]: Եւ որ զթագաւորաց ժամանակն չգրեցի, վասն զի սուրբն Գրիգոր ոչ հրամայեաց այլ ինչ աւելի գրել քան զՀայցուածն ձեր. մանաւանդ զի պատշաճ համարեցաւ զարշակունի [2] և զքաջ թագաւորաց գիր թողուլ տանս Հայոց, և ձեզ պատճէն պատասխանւոյ գրել. զոր ինքն անուանեաց սուրբն Գրիգոր զայս պատճէն՝ Ասորոց պատմութիւն:

Արդ ես սկիզբն այս պատմութեան զձերդ եդիցս ըզհարցումն:

1 Օրինակ մի զի նա զայսոսիկ յառաջագոյն էր գրեալ: Պատճառն այս է զի սուրբն Գրիգոր:

2 Յերկուս օրինակս զարքոնի:

ԶԵՆՈՒԱՅ ԱՍՈՐԻՈՅ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ԱՍՈՐԻՈՅ

ԵՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ԻՆՆԱԿՆԵԱՆ ՏԵՂԱՅՆ

ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՈՐ ՅԱՐՁԱՆԱՅ

Ընդ ժամանակս թագաւորութեանն Խոսրովայ որդւոյ Վաղարշոյ, վրէժխնդիր լինէր [1] *Արտաւանայ եղբօր իւրոյ, և 'ի գոռալ* [2] *ընդ միմեանս երկուց թագաւորացն՝ արքային Հայոց և* [3] *Պարսից, սաստկացաւ մարտ պատերազմին, և զօրացաւ արքայն Հայոց. և սկսաւ ապականել զերկիրն Պարսից ամս տասն, և հիմն 'ի վերջանայր առնել սպանմամբ և գերութեամբ* [4]*։ Եւ եղև միջնորդ արքայն ճենաց, և ոչ կարաց գրաւել զսիրտ նորա 'ի հաշտութիւն. այլ սովով և սրով հանեալ զվրէժս եղբօրն իւրոյ, զոր եսպան արքայն Պարսից։ Իսկ այր ոմն անուն Անակ, 'ի նոյն ազգէն արշակունեաց, խորհուրդ արարեալ առ արքայն Պարսից՝ գալ սպանանել զԽոսրով, և իւր վարձանս առնուլ զՊալհաւն Պարտաւայ։ Զոր յանձին կալեալ արքային Պարսից, ոչ ինչ վերջանայր Պարթևն 'ի սպանմանէն Խոսրովու. այլ յարուցեալ առնու զեղբայր իւր և զկին և զորդիս իւր, և սիրոյ պատ-*

1 Յերկուս օրինակս մահուան Արտաւանայ։

2 Յերկուս օրինակս և գոռալ. 'ի միում օրինակի գոռալոյ։

3 Օրինակ մի յաւելու և Արքաշրի։

4 Օրինակ մի յաւելու. որ ինչպէս բաղում անգամ յշէաց պատարագս և հրեշտակս խաղաղութեան, այլ ոչ եղև հնար դառանել զխաղաղութիւն. ինչպէս և բաղում անգամ եղև միջնորդ։

ճառաւ և փախստեան աղագաւ գայ առ Խոսրով։ Եւ 'ի կատարել երկրորդ ամին, մինչ դեռ կամէր արշաւել Խոսրով 'ի պարսիկս 'ի գարնանային ժամանակս, 'ի ժամ որսոցն մեկուսի առեալ զԽոսրով Անակայ՝ որպէս թէ բան ինչ ունի ասել, յանկարծակի զէնս 'ի վերայ [1] յարուցեալ՝ դիւագաւորն դիւթաւալ կացուցանէր։ Եւ ինքեանք ջրասոյզ եղեալ կործանեցան իւրայոքն ամենեքումք, ոչ ժամանեալ 'ի Պարթևն։ Բայց թագաւորն Պարսից զօր մահուն Խոսրովայ տօն կարգեաց, և զՊարտաւն մեացեալ ազգին տայր Անակայ։

Արդ մինչ 'ի Պարսիցն դիմեալ գայր Անակ յԱրտազ գաւառ 'ի Հանգիստ սուրբ առաքելոյն Թադէոսի, ասեն զսրբոյն Գրիգորի յղութիւնն անդ լեալ. որ և զնորին մշակութեանն ելից զկարգն։ Արդ մինչ 'ի խաղաղութեան էր Խոսրով, այր մի որ կոչէր Բուրդար [2] 'ի նըշանաւոր ազգէն Պարսից՝ ելեալ զկնի Անակայ, և եկեալ մինչև յԱրտազ, և անդի ելեալ գնաց պանդխտել 'ի կողմանս Գամրաց։ Եւ եկեալ 'ի Կեսարիա, և առեալ իւր կին 'ի հաւատացելոց զմեծատան ուրեմն քոյր՝ անուն Եւթաղէ, և քեռն Սոփի։ Եւ կացեալ ամ մի 'ի Կեսարիա, և դարձեալ առ զկինն իւր Բուրդարս այս, և գնաց 'ի պարսիկս։ Զորոյ զհետ մտեալ Եւթաղեայ, հասանէ 'ի գաւառին այրարատեան. և դադարեալ 'ի Վաղարշապատ քաղաքի մտանէր Սոփի ստնտու մանկանն Գրիգորի [3], և իբրև զդայեակ համարձակ սնուցանէր զմեր Լուսաւորիչն։

Արդ իբրև սպան Անակ զԽոսրով, և դեռ յոգւոյ էր, հրաման տայր թագաւորն զաղգատոհմն Անակայ 'ի սուր սուսերի մաշել։ Իսկ Բուրդարս իբրև լուաւ զայս հրաման 'ի թագաւորէն, փութացեալ եմուտ առ Ոգոհի կինն Անակայ, և առեալ զԳրիգոր 'ի գրկաց նորա, և ետ զնա ցկինն իւր Սոփի։ Իսկ զմիւս եղբայր նորա, որ կոչէր Սուրէն, մանկաբարձքն փախուցին 'ի դուռն Պարսից, և անդ մնաւ առ հօրաքեռն իւրում, որ էր կին

1 Ի միում օրինակի 'ի վեր յարուցեալ։
2 Օրինակ մի միշտ Բուռնդարս։
3 Յերկուս օրինակս մանկամբ Գրիգորի։

թագաւորին Զուանչրի Հեփթաղի [1]։ Որ իբրև զարգացաւ, գնաց յերկիրն ճենաց յետ մահուն թոսրովուհեայ. և կացեալ անդ ամս տասն, թագաւորեաց անդ 'ի վերայ երկրին ճենաց ամս իննևտասն։ Զոր ոմանք համբաւեն՝ թէ Սգոն ասեն եղբօրն Գրիգորի, որ է Յակոբ. բայց ոչ գիտեն զատոյգն, զի Յակոբն այն հօրաքեռորդի էր սրբոյն Գրիգորի. և անուն մօրն նորա թոսրովուհի։ Իսկ յորժամ մեռաւ մայր նորա, և զթագաւորութիւնն բարձին 'ի հօրէ նորա Տիրանայ, զի եսպան զնա 'ի պատերազմի արքայն Լփնաց Ռեգէս, ապա Յակոբ հանդերձ քերբն իւրով Ասկդնէիւ [2] մնաց անդ։ Եւ յետ ժամանակաց քեռորդի նորա գնաց յաշխարհն Գթաց, և անդ թագաւորեաց. զոր յետոյ Տըրդատ ըմբռնեաց, մինչ առ արքայն Յունաց էր։ Զի սա էր որ եկն 'ի պատերազմ 'ի վերայ Դիոկղետիանոսի արքային Յունաց, որպէս Ագաթանգեղոս պատմէ զայսոսիկ։ Եթէ ստուգիւ կամիս գիտել զայսոսիկ, ով երանելիդ Բեկտոր, ընթերցիր զթագաւորութիւն Հեփթաղինեկայ հելլենացի գրով, և կամ զթագաւորութենէն ճենաց, զոր գտանես յՈւռհա քաղաքի առ Բարդայ [3] պատմագրի։

Իսկ Բուրդար առեալ զկին իւր և զմանուկն Գրիգոր, գնաց զկնի աներոյն իւրոյ Եւթաղեայ յաշխարհն կապադովկացոց. և տուեալ զնա 'ի դպրոց, ուսուցանէր աստրի և հելլենացի դպրութիւն և լեզու, և վարժեալ լինէր աստուածպաշտութեամբ։ Իբրև եղև երկոտասանամեայ, այր ոմն աստուածապաշտ որ կոչէր Դաւիթ՝ ամուսնացուցանէր զնա ընդ դստերն իւրում, որ կոչէր Մարիամ։ Արդ իբրև եղեն նմա երկու որդիք, անուն անդրանկին Վրթանէս, և կրտսերոյն Ռատակէս, մայրն եմուտ 'ի վանս կանանց, և կրտսերն գնաց զհետ ճըգնաւորի մի՝ որում անուն էր Նիկիմաքոս. իսկ անդրանիկն մնաց առ դայեակն իւր, և յետոյ ամուսնացաւ։

Եւ հայրն անցեալ գնաց առ Տրդատ՝ զհօրն պարտսն հատուցանել. և մնաց առ նմա մինչև նա թագաւորեաց

1 Ցերիս օրինակս Ե-Ռաղի։
2 Օրինակ մի Սակդէնիս։
3 Ցերկուս օրինակս Բարդէան, և 'ի միւս այլ՝ Բարդէնան։

'ի տեղի հօրն իւրոյ. և վասն ոչ զոհելոյ կռոցն՝ 'ի մեծամեծ տանջանս մատնեաց զնա։ Իբրև տեղեկացաւ 'ի քեռոյ աներոյն Գրիգորի եթէ դա է որդին Անակայ՝ որ սպան զՀայրն քո զԽոսրով, և նորա արկեալ զնա 'ի վիրապն ներքին ամս հնգետասան։ Եւ յետ հնգետասան ամին դիւագնեալ ամենայն երկիրն Հայոց, և ինքն թագաւորն 'ի մէջ վարազացն երթեալ դադարէր։ Իսկ 'ի հրամանէն աստուծոյ եկեալ հանին զնա նախարարքն իւր. և նորա ելեալ ժողովեաց զնոսա առ ինքն, և հինգ[1] օր թողու զնոսա անսուաղ առաջի իւր կալով, լսելով զքարոզութիւն վարդապետութեան նորա։ Այս առաջին պահք եղաւ յաւուրս սրբոյն Գրիգորի. զոր 'ի Հռոմ Սեղբեստրոս հաւանեցաւ, և պահեաց ինքն և կոստանդիանոս թագաւորն, և ամենայն քաղաքն Եգիպտոսի. զոր և Առաջաւորք կոչեմք։

Եւ յորժամ լցան աւուրք պահոց նոցա, թափեցան մորթ վայրենական խոզակերպին Տրդատայ[2], և դիւաբնակ մարմինք զօրաց նորա ընկալան զբժշկութիւն[3]։ Ապա ձեռն 'ի գործ արկեալ՝ ուսուցանէր նոցա շինել տունս տէրունականս, և ասէ. Պարտ է քահանայս ածել, որ հովուեն զձեզ։ Իսկ հրեշտակ տեառն հաւանեցոյց զնոսա, զինքն լինել նոցա հովիւ։ Զոր յանձն առեալ, տայ 'ի ձեռս նորա իշխանս և զօրս բազումս, և առաքէ զնոսա յաշխարհն կապադովկացւոց 'ի քաղաքն Կեսարիա, ձեռնադրիլ 'ի սրբոյ հայրապետէն Ղեւոնդեայ։ Եւ ելեալք 'ի վաղարշապատ քաղաքէ, անցանէին ընդ գաւառն Բասենոյ, և գային յերէզնաւան յեկեղեցայ գաւառին, 'ի կուռսն՝ զոր ինքն կործանեաց։ Եւ անտի երթեալք, մտին 'ի Կեսարիա։ Եւ ձեռնադրի 'ի մեծ հայրապետէն Ղեւոնդեայ մեծաշուք պատուոյ. արարեալ նմա մեծարանս, տայ նմա զսուրբ նշխարս կարապետին Յովհաննու և զԱթանագինեայ վկայի։

Բայց եթէ ով եբեր 'ի Կեսարիա զնշխար կարապետին. Յոհաննէս աւետարանիչն։ Մինչ էր նա 'ի Պատմոս կղզին, և եկն յեփեսոս, և անտի երթեալ յերու-

1 Յերկուս օրինակս յԽոսն օր։
2 Օրինակ մի վայրենական ի Բագաւորէն։
3 Օրինակ մի դիւաբնակ մթոց նոցա բժշկեցան։

սաղէմ՝ գտանէ զգերեզման նորա ըստ հրամանի տես-
չութեան աստուծոյ. և առեալ 'ի գիշերի զսուրբ մար-
մինն կարապետին Յոհաննու, և ետ ցՊողիկարպոս ե-
պիսկոպոսն՝ որ էր աշակերտ իւր, և ետ տանել յԵփես-
սոս յեկեղեցին՝ զոր ինքն շինեաց, և կոչեաց զանուն
նորա սուրբ Աստուածածին։ Եւ յետ փոխման աւետա-
բանչին՝ մնաց յԵփեսոս սուրբ նշխարքն կարապետին,
մինչև 'ի ժամանակս Դեկոսի թագաւորի։ Եւ ապա 'ի
ժամանակս նորա նստի յԵփեսոս աշակերտ Ակդենոսի [1]
փարմելոս. և անտի հալածեալ եկն 'ի Կեսարիա, ընդ
իւր ունելով զբոլորովին նշխարս սուրբ կարապետին,
բայց միայն 'ի գլխոյն։ Եւ եդ զնա 'ի սուրբ սիրեգոնն [2],
ոչ 'ի ծածուկ՝ այլ յայտնի. և եկաց 'ի նոյն տեղոջն
մինչև ցթագաւորութիւն Դիոկղետիանոսի [3]։

Եւ 'ի գալ սրբոյն Գրիգորի 'ի ձեռնադրութիւն առ
Ղեւոնդ Կեսարու հայրապետն, որ թէպէտ բազում
անգամ խնդրեաց սուրբն Գրիգոր զնշխարս սուրբ կա-
րապետին, ոչ էառ յանձն տալ. մինչև հրաման 'ի տեառ-
նէ առնոյր 'ի գիշերի վերջնումն՝ բաժանել և տալ զկէսն
ցնա [4]։ Եւ 'ի վաղիւն բազում պատերազմունս սկսաւ
լինել, մինչև նախարարքն կշռեցին քահանայապետին [5]
երկոտասան հազար դահեկան, և այնպէս առեալ
բռնութեամբ՝ ելին 'ի քաղաքէն. մինչ զի խորհուրդ
առեալ իշխանն Անգեղ տանն հարկանել զքաղաքն
'ի գիշերի հրով։ Զոր իմացեալ հայրապետին, հա-
մոզեաց զնոսա 'ի խաղաղութիւն. և փոխանակ երկո-
տասան հազար դահեկանին՝ ետ նոցա զնշխարս Աթա-
նագինեայ, և հազիւ կարաց արձակել զնոսա հաշտու-
թեամբ և սիրով։ Տայր և սրբոյն Գրիգորի երկու լու-
սաւոր ակունս, զոր էր տուեալ նմա Հռոմայ հայրա-
պետն։

Ելեալ 'ի Կեսարիոյ՝ մնայր ժամանակս ինչ 'ի Սեբաս-

1 Օրինակ մի Որոգինանոսի Փերմելէոս։
2 Օրինակ մի ի պապանի ի սուրբ սիրգոնն։
3 Օրինակ մի չունի մինչև ցՆուգաստրոմիրն Դիոկղէտիանոսի։
4 Օրինակ մի ի վերջնումն գայ նմա գրեթէ զբովանդակն իսկ՝ ասելս ինչ մասն ի գեղջն Ռոդէալ։
5 Օրինակ մի գաղտագողէին։

տիա, հաւաքել զդասս կրօնաւորաց։ Եւ զոմանս վարդապետս կոչէր յԱղեքսանդրիոյ, և հրաշազան պաշտօնեայս· յորոց մին Դիկլառիոս [1], զոր Դունայ դաշտին եպիսկոպոս ձեռնադրեաց. նոյնպէս և զայլս յԱսորոց։ Որ և զիս իսկ ոչ եթող դառնալ 'ի Նիւատրա՝ հրաժարեալ յեղբօրէն իմմէ Եղիազարու։ Եւ անտի ելեալ անցաք մինչև 'ի Թորդան. և անդ թողաք զՍուրտինոս եպիսկոպոսի՝ վարդապետ ամենայն գաւառացն։

Եւ մեք ելեալ անտի, ընդ Կարին և ընդ Հարք կամեցաք անցանել։ Իսկ ոմանք յիշխանացն զգացուցին սրբոյն Գրիգորի, եթէ 'ի գաւառն Ցարօնոյ երկուս բազինս մնացեալ են՝ որ դեռ ձօնեն զիւաց։ Իսկ նորա զէմ եղեալ գայր, զի և զայնս քանդեսցէ. և եկեալ յերկիրն Պալունեաց յաւանն մեծ Գիսանէ 'ի քաղաքագեղն կուառս, ոմանք 'ի քրմացն անդ հանդիպեցան։ Եւ տեղեկացեալ յիշխանէն Հաշտենից՝ եթէ առ վաղիւն կործանելոց են զմեծ աստուածսն Գիսանեայ և Դեմետրեայ, գիշերագնաց եղեալ 'ի տեղի աստուածոցն, և լցին զդանձս 'ի տունս գետնափորս։ Եւ ինքեանք աղդ արարին յԱշտիշատ 'ի քուրմն՝ եթէ ժողովեցէք արս պատերազմողս, և փութապէս վաղիւն հասէք առ մեզ, զի մեծն Գիսանէս 'ի պատերազմ ելանելոց է ընդ ուրացեալ իշխանսն։ Նոյնպէս և զարսն կուառացն սրեցին՝ դարան գործել 'ի ցանկս այգեացն, և զոմանս յանտառն դարձուցին [2]։ Եւ որ գլխաւոր քուրմն էր, անուն Արձան, և որդւոյ նորա՝ Դեմետր, առեալ զօրս՝ որք 'ի կուառատանն էին [3] արս իբրև չորեքհարեւր, և ելեալ 'ի վերայ լերինն՝ ուր հանդէպ կուառացն էր, և մնացին մինչև այլ զօրքն ուստեք եկեսցեն նոցա յօգնականութիւն։ Ելեալ 'ի վաղիւն անցանէին ընդ ստորոտ լերինն, զոր օրինակ սովոր էին ասպատակել [4]։

Իսկ սրբոյն Գրիգորի առեալ զիշխանն Արծրունեաց, և զիշխանն Անձեւացեաց [5], և զիշխանն Անգեղ տան, և

1 Օրինակ մի Դիմատիոս։
2 Օրինակ մի դարանեցուցին։
3 Օրինակ մի առեալ զարան որ ի գանձ ֆոռոց էին։
4 Օրինակ մի յօգնականութիւն։ Իսկ զբրքն Հայոց ելեալ անցանէին ընդ սոր-ոտ լերինն Մեղրեայ, զոր օրինակ սովոր են ասպատակել զբրքս ալխատելոյ։
5 Օրինակ մի յաւելուս զիշխանն Սիւնեաց գանն։

սակաւ ինչ զօրու իբրև արս երեքհարեւր, ելեալ յերրորդ ժամու ընդ բլուրն՝ ուր Արձանն էր թագուցեալ, և գային յանհոգս եղեալ, բնաւ չունէին կասկածս։ Եւ իբրև մերձ եղեն ընդ ելս զառ 'ի վերին, յառաջ մատուցեալ Արձանն և Դեմետր, և հնչեցուցին զփողն պատերազմին, և յանդգնաբար յարձակեցան 'ի վերայ։ Զոր լուեալ իշխանքն՝ ընդոստեան յոյժ. զի յորժամ լուան երիվարքն զձայն փողոցն, սկսան վրնջել և պատերազմ յուզել։ Իսկ իշխանն Անգեղ ասն ձայն արձակեալ ասէր. Իշխան Սիւնեաց, յառաջ մատիր և տես՝ գուցէ զօրք հիւսիսոյ իշխանին են։ Իսկ նորա երթեալ, և ոչ կարաց գիտել՝ թէ ո՞ք են։ Դարձաւ և ասէ. փախո զԳրիգորդ յանհոգս ուրեք, հանդերձ ընկերօք իւրովք. գուցէ ըմբռնիցեն զդա, և մեք ամօթ կրիցեմք 'ի թագաւորէն։ Եւ դու առաքեա զոք զկնի զօրացն մերոց, զի դարձցին յետս. քանզի ռազմ՝ է բազում զօրաց, և բազում՝ դրօշք երևին փողփողեալք։

Իսկ իշխանն Անգեղ ասն տայ զսուրբն Գրիգոր [1] 'ի ձեռն իշխանին Մոկաց, և ասէ. փութացս յամուրն Ողկան, մինչև տեսցուք՝ թէ զինչ լինիցի. և ինքն առաքեաց զկնի զօրացն՝ ազդ առնել [2]։ Իսկ իշխանն Մոկաց առեալ զԳրիգորիոս, դառնայ ընդ զառ 'ի վայր բլերն՝ կամելով իջանել 'ի կուառս։ Իսկ արք տեղւոյն սկսան զանց ճանապարհին պահ ունել. զոր տեսեալ սրբոյն Գրիգորի՝ թէ մեծ վտանգ է 'ի տեղւոյն, իջուցեալ զնըշխարս մերձ առ աղբեր մի յայն կոյս ձորոյն հանդէպ գեղջն, գնէր և նշանագրէր զտեղին։ Եւ ծածկեաց տէր զնշխարսն, և ոչ ոք կարաց տեսանել մինչև սուրբն Գրիգոր դարձաւ 'ի տեղին։

Իսկ արք գեղջն հետամուտ եղեն մեզ. և մեք հեծեալ յիւրաքանչիւր երիվարս, փախստական գնացաք յամուրն Ողկան. և յառաջեալ քան զնոսա մտաք 'ի ներքս. քանզի ընդդէմ եկին արք տեղւոյն, և մուծին զմեզ 'ի ներքս։ Իսկ արք գեղջն եկեալ անդին յայնկոյս 'ի քաղաքն կուառս, և ազդ արարին նոցա զմէնջ. զոր լը-

1 Օրինակ մի յաւելու Եւ զպայծառնէայս նորա։
2 Օրինակ մի առաւելաց երի՝ արս գոյժ տալ զօրոն։

ւեալ յայսկոյս անցին, և զամրոցն սկսան պաշարել։ Իսկ մեր 'ի վարանս մտեալ, յղեցաք գիշերագնաց զոմն առ իշխանն Անգեղ տան, և թղթով ծանուցաք զիրան։ Իսկ նորա չորեք հազար արանց ընտիր սուսերաւորաց առաքեաց. որք 'ի վաղիւն եկեալ անցին յայնկոյս գետոյն։ Եւ յետ երից աւուրց պաշարեալ զքաղաքն աւերեցին, և զպարիսպն հիմնայատակ արարին, և զմարդիկ քաղաքին բերեալ 'ի Մեղտի անցուցին։

Իսկ իշխանքն Իբրև լուան՝ ելին 'ի վերայ բլերն, և տեսին զԱրձանն, զի արս չորեքհարիւր լոկ՝ թէ աւելի կամ պակաս՝ ունէր ընդ իւրն։ Վաղվաղակի 'ի վերայ յարձակեալքաջ իշխանացն, 'ի փախուստ դարձուցանէին զԱրձանն. իսկ այլ զօրքն Հայոց Իբրև լուան զձայն գուժին, վաղվաղակի ամենեքեան անդր 'ի բլուրն հասանէին։ Իսկ Արձանն յառաջ մատուցեալ՝ սկսաւ թշնամանել զիշխանան Հայոց, և ասէ. Ցառաջ մատիք, ո՛վ դենակորոյսք, և ուրացողք զՀայրենի աստուածն, և թշնամիք բարեփառին Գիսանէի. ո՞չ գիտէք զի այսօր Գիսանէ 'ի պատերազմ՝ ելեալ է ընդ ձեզ, և մատնելոց է զձեզ 'ի ձեռս մեր, և հարկանելոց է զձեզ կուրութեամբ և մահուամբ։ Իսկ իշխանն Արծրունեաց 'ի մէջ անցեալ, ասէ. Ո՛վ որ խրոխտասդ 'ի վերայ մեր. եթէ վասն աստուածոցն մարտնչիս, սուտ ես. և եթէ վասն երկրիդ, բնաւ իսկ անմիտ ես. զի այս իշխանն է Անգեղ տան, և իշխան Սիւնեաց տանն, և այլք 'ի պատուաւորաց՝ զորս դուք իսկ ճանաչէք։ Իսկ Դեմետր որդի Արձանին ասէ. Լուարուք մեզ իշխանքդ Հայոց. այս քառասուն ամ է՝ զի ծառայեմք մեծի աստուածոցն, և գիտեմք զզօրութիւն նոցա, զի ընդ թշնամիս պաշտօնէից իւրեանց ինքեանք մարտնչին։ Արդ մեք պատերազմաւ ձեզ չկարեմք ընդդիմանալ. զի այս տուն է թագաւորին Հայոց, և դուք իշխանք նորա։ Բայց այս ձեզ յայտնի լիցի, որ թէպէտ մեք ձեզ յաղթել ոչ կարեմք, սակայն լաւ է այսօր մեռանել 'ի վերայ աստուածոցն մերոց՝ քան թէ զտաճար նոցա 'ի ձէնջ ապականեալ տեսանեմք, որով և զկեանս ատեցաք և ըզմահ սիրեցաք։ Բայց որ իշխանդ ես Անգեղ տան՝ յառաջ մատիր, զի մենամարտեսցուք ես և դու։

Ցայնժամ 'ի մէջ անցեալ իշխանն Անգեղ տան և Արձանն, և սկսան անցանել շուրջ զմիմեամբք. և աճապարեալ Արձանն եհար տիգաւ 'ի վերայ բարձից նորա, և մերձ տարաւ յընկենուլ զնա։ Իսկ իշխանն դարձեալ 'ի վերայ նորա, ասէ. Գիտես զայս, Արձան, զի տեղւոյս այս Արձան են կոչելոց. զի քեզ արձանանալ պիտի յայսմ վայրի։ Եւ 'ի վեր ամբարձեալ զձեռն իւր՝ իջուցանէր զսուրն 'ի վերայ աջոյ թիկանցն, և 'ի բաց ձգէր զպարանոցն հանդերձ ձախ թիկամբն և ոտամբն։ Եւ նորա անկեալ յերկիր թաւալէր. և կուտեցին արձան 'ի վերայ նորա, և կայ 'ի թաղման 'ի նմին տեղւոջն՝ որ դեռ ևս Արձան կոչի անուն լերինն։

Եւ մինչ այս այսպէս գործեցաւ, փութանակի եկին հասին զօրքն քրմայ 'ի Վիշապ քաղաքէ, և արք Պարթևոյ և արք Մեղաոյ ամենեքեան առ հասարակ անդր հասանէին։ Եւ այլք յԱստղենից եկեալ ընդ նոսա, ընդ ամենայնն, որպէս և ինքեանք յետոյ ասէին, հինգհազար չորեքհարեւր և յիսուն այր։

Իբրև հասին 'ի գլուխ լերինն, ձայն գուժեաց յերկոսեան գունդսն. և միաւորեալ դասք քրմայն ընդ միմեանս, յարձակեցան 'ի վերայ զօրացն Հայոց, և փախստական արարեալ իջուցին զնոսա զառ 'ի վայր լերինն ընդ գեղջն կողմանէ։ Իսկ արք գեղջն այնորիկ քանզի դարանամուտք էին, ընդդէմ եկեալ մերոց զօրացն, և յերկուց կողմանց 'ի մէջ առեալ զզօրսն Հայոց, սկսան կոտորել։ Իսկ իշխանն Անգեղ տանն հերձեալ զքրմայն կողմն, և անցանէր յետուստ կողմանէ, և ուշ բլերն առնէր. զի անդ արք հետևակք, որ զառ 'ի վերին կողմանէն էին՝ բազում ինչս արարին վիմաք երիվարացն։ Իսկ Դեմետր իբրև ետես՝ եթէ Անգեղ տան իշխանն 'ի բլուրն ել, թողեալ զզօրսն՝ ուշ նմա արարեալ, նոյնպէս և այլ զօրքն սկսան ձիախաղաց անդր ժողովել։

Իբրև ելին 'ի վերայ բլերն, ճակատեցան դարձեալ առ միմեանս։ Եւ կային մեայնին իշխանքն մեր զօրուն իւրեանց, զի դեռ ամենեքեան չէին ժողովեալ. քանզի չորեք հազար այր դեռ 'ի Մեղաի զգերիսն ունէին, իսկ երեք հազարն անցին ընդ Բասեան և ընդ Հարք. իսկ

այլքն դեռ 'ի դաշտի անդ սփռեալ ասպատակէին։ Եւ յորժամ ճակատեցան առ միմեանս, և կամէին խառնել ընդ իրեար, ժամանեաց նոցա երեկոյ. և 'ի նոյն վայրի իջեալ բանակեցան մինչև ցառաւօտն։ Եւ իբրև առաւօտ եղև, եկին հասին 'ի նոյն տեղի Ճնացեալք[1] զօրուն Հայոց, և այլք ոմանք 'ի Տիրակատարն քաղաքէ, որպէս թէ արք հինգ հարեւր, եկին օգնել[2] քըրմացն։ Արդ իբրև հարստացան երկոքին կողմանքն, և էին վեց հազար ինն հարեւր քառասուն և վեց արք քըրմացն, իսկ հինգ հազար և ութսուն զօրք իշխանացն Հայոց, ապա հնչեցուցին զփողս պատերազմացն, և դիմեցին իւրաքանչիւր այր 'ի դէմ առն դիպանաւորի. զառաջինն յաղթեցին զօրքն Հայոց՝ քրմացն։ Իսկ 'ի նոյն ցեղէն Դեմետրեայ իշխանն Հաշտենից, որ էր ընդ զօրսն Հայոց, կտրեալ եօթն հարեւր արամբք 'ի քրմացն կողմ ելանէր[3]. և սկսաւ կռուել ընդ իշխանս Հայոց։ Իբրև տեսին զօրքն Հայոց զնա, լքան և յերկիր կործանեցան. զի այնպիսի այրն այն յաղթող և հմուտ պատերազմի և կորովի, մինչ զի ամենայն իշխանքն Հայոց դողային 'ի նմանէ։ Եւ յանխնայ սկսաւ արեան ճապաղիս հանել. և ամենայն զօրքն զաղաղակ բարձին առ իշխանն Սիւնեաց։ Իսկ նորա ձայն տուեալ, ասէ. Ա՛յ գայլակորիւն, յիշեցեր զբարս հօրքո, և 'ի նոյն շաղղակերութիւն դարձար։ Իսկ նա ասէ. Ա՛յ արծուոյ ձագ, թեւոքդ ես հպարտացեալ, բայց եթէ 'ի շար[4] ակնատացս անկանիս, ես ցուցանեմ՝ քեզ զիմ զօրութիւնս։ Իսկ իշխանն Սիւնեաց չանդուրժեաց առ թշնամանան. յարձակեալ 'ի վերայ նորա, եհար մրճո

և զմարմինն գահավէժ արարեալ, ասէ [1]. Ցեսցեն զքեզ անգեղք, և գիտասցեն՝ եթէ արծուոյ հարեալ է զնապաստակդ։ Եւ ինքն դարձաւ։ Որ մինչև ցայսօր Արծուիք կոչեն տեղոյն։

Իսկ իշխանն Արծրունեաց 'ի մէջ անցեալ՝ կտրեաց զբրմապետն Աշիշատայ, որոյ անունն էր Մետակէս [2]. և տարաւ փախստական մինչև 'ի գլուխ լերինն՝ ընդ դիտան վայրուցն [3]։ Եւ իբրև եհաս նմա, ընդդէմ դարձաւ Մետակէսն, և եհար զբարձս նորա. իսկ նորա ջեռեալ յարենէ խոցուածին, աճապարեալ կտրեաց զթիկունս, և պարանոցաւն 'ի բաց ընկէց, և զդի նորա դարահոս արար. զոր և Մետասակող [4] կոչեն զանուն տեղոյն։

Իսկ իշխանն Արջուց [5] փախուցեալ 'ի նոյն վայրս թագեաւ. զոր տեսեալ իշխանին Արծրունեաց՝ որպէս թէ ընդ չտես [6] արար, և գնացեալ մերձեցաւ առ նա. և յանկարծակի յարձակեցաւ 'ի վերայ նորա։ Իսկ նորա փախստական եղեալ ընդ անտառն, կտրօն փայտի էանց ընդ սիրտ նորա և ընդ լեարդն, և անդէն մեռաւ։ Իսկ նորա առեալ զերկոսին երիվարսն և դարձաւ. և անուանեցաւ տեղին այն Արջուց ձոր։

Եւ իբրև դարձաւ անտի, եկեալ հանդիպեցաւ զի Դեմետր և իշխանն Անդեղ տան մարտնչէին ընդ միմեանս։ Եւ նորա 'ի վերայ յարձակեալ [7], կտրեաց զաջոյ ուս նորա, և 'ի վայր ընկէց. և կտրեաց զգլուխ նորա, և ձգեաց 'ի մախաղ իւր. և դարձաւ։ Եւ յարձակեալ 'ի վերայ զօրայն, յանխնայ կոտորեալ դիթաւալ առնէին իբրև արս հազար երեսուն և ութ. և զայլսն մերկացուցին։ Եւ 'ի նոյն պատերազմին եսպան Դեմետր զորդի Մոկաց իշխանին. որ և մեծ սուգ եհաս իշխանացն Հայոց։

1 Ի միում օրինակի ընդ գահն ի վայր գլէաց ասելով։

2 Յերկուս օրինակս պակասէր հատուածս որոյ անունն էր Մեսակէս։ Իսկ զանուն քրմին ուղղեցաք Մեսակէս որպէս յիշատակի 'ի ատորև ըստ երից ձեռագրաց. զի երկու այլք ունէին Մեսակէս։

3 Օրինակ մի ընդ դիպանոց վայրուցն։

4 Ի միում եւեթ օրինակի Մեսակէս. 'ի միւս այլ Մեսակողմ և ի միւս՝ Մեսակող։

5 Յերիս օրինակս Արջայ։

6 Յերիս օրինակս որպէս ոչ ընդ լսելոյս արար։

7 Օրինակ մի յաւելու զրմին Դեմետրէայ։

Արդ իբրև մեռաւ Դեմետր 'ի նոյն պատերազմին, հնչեցոյց իշխանն Սիւնեաց զփողս պատերազմին 'ի խաղաղութիւն. և լռեցին երկոքին կողմանքն 'ի կոտորելոյ զմիմեանս։ Զոր իբրև տեսին արք կողմանցն, որ քուրմքն էին, աղաչեցին զիշխանն 'ի խաղաղութիւն, զի թաղեսցեն զմեռեալս իւրեանց. և թոյլ եառն։ Եւ ժողովեցին զամենայն կոտորեալսն յերկոցունց կողմանցն. և հատեալ գերեզմանս՝ լցին զնոսա 'ի ներքս, և կանգնեցին 'ի վերայ գերեզմանացն արձանս, և գրեցին 'ի նմա այսպէս.

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՈՐ ԵՂԵՒ ՅՈՅԺ ՍԱՍՏԻԿ
ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԳԼԽԱՒՈՐ ԱՐՁԱՆ ՔՐՄԱՊԵՏՆ
ՈՐ ԿԱՑ ԱՅՍՐ Ի ԹԱՂՄԱՆ
ԵՒ ԸՆԴ ՆՄԱ ԱՐՍ ՀԱԶԱՐ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՈՒԹ
ԵՒ
ՁԱՅՍ ՊԱՏԵՐԱԶՄ ԱՐԱՐԱՔ ՎԱՍՆ ԳԻՍԱՆԵԱՑ ԿՌՈՅ
ԵՒ ՎԱՍՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Զայս գրեցին ասորի և հելլենացի գրով, և յոյն և իսմայելացի նշանաւ [1]։ Եւ ինքեանք իջին երեկօթս առնել յիննակնեան տեղոջն. և փութապէս կոչնական աբարին սրբոյն Գրիգորի, և ինքեանք մնացին անդէն։ Ոմանք 'ի գիտանոցն մնացին, և այլ զօրքն 'ի մարգճակին իջևանս կալեալ առ քաղցր աղբերն անտառին։

Իսկ մեք 'ի յամրոցէն ելեալ, եկաք ընդ նոյն ճանապարհ՝ ընդ որ փախստական գնացաք։ Իբրև եկաք 'ի վայրս գեղջն [2], մոլորեցաք. քանզի գիշեր էր։ Բայց մինչ դեռ գայաք առ ափամբ այգեստանեացն, յանկարծակի ծագեաց լոյս սաստիկ առաւել քան զճառագայթս արեգականն 'ի նշխարացն՝ զոր պահեալ էր սրբոյն Գրիգորի։ Եւ այնչափ ծագեաց, մինչև ամենայն բնակիչք գեղջն 'ի դուրս ընթացեալ արք և կանայք ծերք և տղայք 'ի տեսիլն, և հիացեալք՝ սկսան զղջանալ։ Եւ

1 Յերիս օրինակս ասորի և հելլենացի և յոյն գրով, և իսմայելացի նշանաւ։
2 Օրինակ մի յաւելու Կոտոտաց։

նոյնժամայն բարձեալ տարան զնշխարսն մինչև 'ի մէջ գեղջն, և պաշտօն ցնծութեամբ կատարեալ մինչև ցառաւօտն, և 'ի վաղիւն բարձեալ՝ եկաք յԱրձանն, և ընթերցաք զգիրն։ Եւ բազում ժամս արտասուեալ սրբոյն Գրիգորի վասն 'ի զուր կոտորածին, և ապա առեալ զալ թեկն Մկրտչին՝ տեառնագրեաց շուրջ զամենայն կողմամբքն գաւառին, ասելով. Եղիցի ալ տեառն 'ի վերայ երկրիս այսորիկ, պահել 'ի թշնամեաց. և թէ վասն մեղաց տանջեցան 'ի տեառնէ, սակայն թշնամիք սորա մի յերկարեսցեն, այլ չարեօք սատակեսցին։ Եւ մի հերձուածողք բնակեսցեն յայսմ աշխարհս. ալ սրբոյ կարապետին եղիցի կնիք և պահապան, և միանգամայն եղիցի տունս այս շինուած յաւիտենական ազգաց յազգս։

Եւ ասացեալ մեր զամէնն, ձայն դղրդի [1] եհաս յականջս մեր։ Եւ իբրև եկաք իջաք յիննակնեան տեղիսն, ընդ առաջ եղեն [2] մեզ իշխանքն Հայոց, աւետիս տալով մեզ՝ եթէ Դեմետր կործանեցաւ։ Եւ իբրև եկաք 'ի տեղին, տեսաք զտեղի կռոցն քանդակեալ [3]. և զկուռսն, որ հնգետասան կանգուն էր, ընդ չորս բաժանեալ։ Եւ պաշտօնեայք կռոցն զաղաղակ բարձեալ՝ ողբային չարաչար, որ և դևքն 'ի լսելիս մարդկան կոծէին՝ ասելով. Վայ մեզ, զի և ոսկերք մարդկան մեռելոց հալածեն զմեզ յերկրէս։ Եւ մարդկօրէն տեսլեամբ որպէս թևաւորք եկեալ գնացին յԱշտիշատի կուռսն։ Իսկ այլք 'ի դիւացն իբրև զպիծակս անհուն բազմութեամբ, կամ թէ որպէս թանձրամած տաղտարափս՝ այնպէս յարձակեալք 'ի վերայ բազմութեանն, և զքուրմն առ հասարակ լլկեալ՝ թողին իբրև զմեռեալս։ Եւ մատուցեալ սրբոյն Գրիգորի, բժշկեաց զնոսա. և հրամայեաց կործանել զգիսանէս, քանզի պղնձի էր՝ երկոտասան կանգուն երկայնութիւն [4]։ Իբրև մատեան կործանիչքն 'ի ներքոյ նորա, զոր տեսեալ պաշտօնէիցն՝ բազում ողբովք 'ի վերայ

1 Ցերիս օրինակս յայն դղրդոց։
2 Ի միում օրինակի ընդառաջէն։
3 Ի միում օրինակի խորշանէալ։
4 Ցերկուս օրինակս զԳիսանէս, որ էր երեսուն կանգուն երկայնութիւն, և երկու կանգուն և հաստ մի լայնութիւնն պղնձի պատկերին։

յարձակեալք, ասէին. Մեռցուք նախ մեք, և ապա մեծն Գիսանէս կործանեսցի։ Իսկ զօրացն 'ի մէջ առեալ ըզքուրմն սպանին արս վեց· և ապա կործանեցին զդուրբս մահուն։ Իսկ դևքն ձայն բարձեալ, ասէին. Թէպէտ և դուք զմեզ ասատի հալածէք, բայց որք ասատ կամին բընակիլ, և նոցա մի լիցի հանդիստ։ Բայց չէ անհաւատալի. զոր օրինակ ընդ դրունս քաղաքի զօրք բազում մտանեն, նոյնպէս և այս տեղիս դուռն էր դիւաց. զի այնչափ էին դևքն 'ի տեղւոջն Գիսանէ, որչափ 'ի սանդարամետս անդնդոց։

Իբրև կործանեցին զօրքն զկուռսն, սկսաւ սուրբն Գրիգոր հիմն արկանել եկեղեցւոյ։ Եւ վասն զի ոչ գոյր նոցա նիւթ պատրաստ, առեալ քարինս անկազմս և անտաշս, և գտեալ կիր 'ի բնակութիւնս կռոցն, սկիզբն արար եկեղեցւոյ 'ի տեղիսն ուր կուռքն Դեմետրեայ էր լեալ՝ ըստ նորին չափոյ։ Եւ արար անդ աւուրս երկոտասան, և կամէր զնշխարս սրբոյ կարապետին զամէնն ասատ դնել, բայց ոչ էառ հրաման 'ի տեառնէ։ Այլ զհասարակն առեալ դնէր 'ի տապան բրտեայ [1], զի հողեղէն է և ոչ ոսկեղէն. վասն այնորիկ ոչ է պարտ ոսկով պատել զմեռեալ մարմին մարդկան։ Եւ եդ զնոյն տապանն 'ի նոյն պղնձի տապանն. և եդ անդ զմի ակն լուսոյ, զոր եբեր 'ի Կեսարիոյ՝ անուն լիգրոն [2]։ Եւ ոչ եթէ յայտնապէս ումիք դնէր, այլ զտեղին 'ի ծածուկ կազմեալ, և 'ի դիշերին առեալ բրիչս ես և Աղբիանոս եպիսկոպոս, բրեցաք երկու առնաչափս, արկեալ 'ի ներքոյ խիճս քարանց, և եդաք անդ զնշխարս սրբոյ կարապետին։ Եւ այս էին զոր եդաք. զալ թեկն մինչև ցարմուկն, և զձախ ձեռն թիկամբն հանդերձ, և զոսկր բարձուց աջակողմանն, և այլ մանր ոսկերս 'ի մարմնոյն։ Իսկ զԱթանագինէին զգլուխն և զալ ձեռն մինչև ցգօտին զամենայն հատեալ ընդ մէջ, և զնորայն եդաք 'ի կաւէ տապան։ Զոր թէ ստուգիւ կամիք իմանալ, ցՊիսիդոն թարգմանիչ ասորի իսկ հարցէք, և նա ասէ ձեզ։ Քանզի կարապետին առ անկեան դրանն Արշա-

1 Յերիս օրինակս Բրգնէայ։
2 Օրինակ մի ղինգիրոն։

կունի, թզաւ մի հեռի գտանես զբևեռս նշանին 'ի մը-տիցն, կէս թզաւ բարձր 'ի գետնոյն և յաջմէ եկեղեցւոյն։ Զոր գրեալ է սուրբն Գրիգոր 'ի տախտակս պղնձի, և եդեալ 'ի բեմի անդ՝ թէ կին ոք մի իշխեսցէ մտանել ընդ դուռն եկեղեցւոյդ. զի մի կոխելով զպատուական նշխարսն, անհաշտ խռովութիւն լիցի աստուծոյ ընդ նոսա՝ որ մտանենն և ակնարկեն ընդ նա իսկ. զոր և Պիսիդոն իսկ ընթերցեալ է զտախտակն։

Իսկ Ամանագինէին առ նոյն սեամն հուպ ընդ ձախակողմ անկիւնին [1]. և այնպէս անյայտ կան 'ի պահեստի, զոր և թէ գտանել ոք կամի բևեռացն նշանաք՝ չիք հնար, թէ և քառասուն կանգուն փորիցեն. զի պատճառ իրացն այս եղև։ Յորժամ՝ պահեցաք զնշխարս սրբոյն, երիցս անգամ ծունր կրկնեալ սրբոյն Գրիգորի մեք հանդերձ, և յարուցեալ տարածեաց զձեռս իւր ընդ արևելս, և ասէ.

Աստուած աստուծոց և տէր տերանց, որ կատարես զկամս երկիւղածացքոց, և ոչ անտես առնես զաղաչանս այնոցիկ՝ որ խնդրեն 'ի քէն. դու տէր, որ պահեցեր ըզսա և ածեր մինչև 'ի տեղիս յայս, ձգեա՛ զաջքո 'ի վերայ տապանաց սոցա, և կնքեա անվթար զօրութեամբ քով զոսկերս սոցա, զի մի ոք կարասցէ հանել զսոսա ատի և գտանել մինչև յօր կատարածի աշխարհի և նորոգման սոցա և ամենայն սրբոց։ Թէպէտ և 'ի սրբոց աք ջանայցէ հանել, աղաչեմ մի լուիցես նոցա աղօթիցն. այլ որք յուսով և հաւատով խնդրեսցեն զբժշկութիւն 'ի դուռն սրբոյ կարապետիս, բժշկեսցես զնոսա։ Բայց միայն թէ կամք քո իցեն թողուլ զնոսա 'ի ցաւս իւրեանց, զի տանջեալ մարմնով՝ ապրեսցին հոգւով 'ի հանդերձեալ դատաստանին։ Իսկ զդաստ պաշտօնէիդ սորա պահեա, որ զգուշութեամբ ծառայեն քեզ և սրբութեամբ 'ի սուրբ եկեղեցւոջս. զի դու միայն ես կարող յամենայնի, և քեզ փառք յաւիտեանս։

Եւ մեր ասացեալ զամէնն, եկն ձայն յերկնից որ ասէր. եղիցի քեզ որպէս և կամիս, մի ոք գոցէ զդոսա հանելոյ պատճառաւ [2]. և որք ծառայեն ինձ սուրբ և ան-

1 Յերիս օրինակս իսկ Ամանագինէս հուպ առ սեամն ընդ յախակողմեանն։
2 Յերիս օրինակս Ա մի ոք գիրասցէ զդոսա ըստ հանելոյ խողման։

կեղծաւոր վարուք 'ի տեղւոյդ, մանակից լիցին գոցին բարեացն։ Եւ շարժեալ ծածկեցաւ տեղին։ Իսկ 'ի վաղիւն ածեալ առաջի Սիւնեաց իշխանին քուրմն մի, աղաչէին՝ զծածկեալ տեղիս գանձուցն ցուցանել և ըզդրունս գետնափոր տանն. և ոչ ասաց, այլ մեռաւ 'ի նոյն կախաղանին։ Եւ ոչ եղև հնար գտանել՝ թէպէտ և կարծէին ընդ հիմամբքն եկեղեցւոյն լինել, ուր Դեմետրեայ տաճարն էր։ Քանզի հիմն եկեղեցւոյն եղաւ 'ի նոյն տեղիս, նոյն չափովն լայնութիւնն և երկայնութիւնն. բայց միայն զի նոքա յարևմուտս երկրպագէին։ Նոյնպէս քննէին և զտաճարն Դիսանէին 'ի վեր բերել[1], որ էր առ յորդ աղբերն յարևելից կուսէ, որպէս երկուս քայլս մարդոյ հեռի դոլով, և ոչ գտին։

Իբրև լցան նոցա անդ աւուրք ինն, երթեալ իշխանն Սիւնեաց յաւանն կուառս, հաւանեցոյց զզօրս գեղջն՝ գալ 'ի մկրտութիւն. որք յանձն առին և եկին ընդ նմա։ Եւ առեալ սրբոյն Գրիգորի իջուցանէ զնոսա 'ի ձորն Ա.յծանայ[2] և մկրտեաց զնոսա. որ էր յարևելից կուսէ հանդէպ Կաճկոնից՝ Աստղոնից բերդին, Եւ մկրտեաց զնոսա քրիստոսազարդ օծմամբն, առնելով հաւատացեալս սուրբ երրորդութեանն։ Եւ երևեցոյց տէր լոյս մեծ 'ի սեան հրեղինի 'ի վերայ մկրտելոյն. և կացեալ երիս ժամս լոյսն 'ի վերայ սխրալի քահանայագործութեանն, և անդէն ծածկեցաւ 'ի տեսողացն։ Եւ որք մկրտեցանն էին, արք և մանկտի, ոգիք հինգ հազար և յիսուն։ Եւ առեալ ածէ զնոսա 'ի տէրունական տաճարն, և տօն սրբոյն Կարապետին տայր կատարել որ օր մի էր Նաւասարդի։ Եւ տուեալ զնոսա 'ի ձեռս քահանայիցն, ետ տանել 'ի գեղս իւրեանց։ Եւ հրամայեաց քահանայիցն նշան փայտեայ կանգնել ուր զնըշխարան եգիտ, և 'ի մէջ գեղջն. և զկանայսն անդ[3] մկըրտել։ Իբրև եղև այս ամենայն, ժողովել տայր սուրբն Գրիգոր զմանկունս քրմացն և զպաշտօնեայս կռոցն, և աղաչէր զնոսա՝ դառնալ առ տէր աստուած[4]։ Իսկ նոքա

1 Օրինակ մի Բրեալ։
2 Յերկու օրինակս 'ի յորն Եմանուս. զոր և այլ օրինակ 'ի լուսանցան յաւելուս։
3 Օրինակ մի Նմանապէս։
4 Օրինակ մի յաւելու Եւ առնուլ պարգեւս յիշխանացն Եւ ի Բագատրէն։

ոչ առնուին յանձն, այլ ասէին ցիշխանան. Զայս բանս 'ի միտ առէք[1], որ թէ ապրիմք՝ փոխարէնս առնեմք ձեզ. և թէ մեռանիմք, աստուածքն հատուցանեն զվրէժս մեր։ Եւ լուեալ զայս իշխանն Անգեղ տանն, ետ տանել զնոսա 'ի փայտակարան քաղաքն 'ի տուն բանդի արս չորեքհարիւր երեսուն և ութ՝ գերծեալ զդէս նոցա։

Այլ և յոյժ զարմանալի էր տեսիլ նոցա, քանզի սեք էին և գիսաւորք և զազրատեսակք, զի ցեղով 'ի հընդկաց էին։ Քանզի և կռոցն, որ յայս տեղոջ էին, պատճառն այս է։ Դեմեար և Գիսանէ իշխանք էին հնդկաց, և եղբարք ցեղովք[2]. դաւ իմն խորհեալ նոցա Դինաքսեայ արքային իւրեանց, զոր իրազեկ եղեալ արքային՝ առաքէ զօր զհետ նոցա, կամ սպանանել, կամ յերկրէն հալածական առնել։ Իսկ նոցա լեալ մազապուր՝[3] անկան առ թագաւորն Վաղարշակ. և նա ետ նոցա զերկիրն Ցարօնոյ իշխանութեամբ. զոր ինքեանք շինեցին քաղաք, և կոչեցին Վիշապ։ Որք եկեալ յԱշտիշատ, և կանգնեցին զկուռսն զայնոսիկ յանուն կռոցն զոր 'ի հնդիկան պաշտէին։ Եւ յետ հնգետասան ամի սպան թագաւորն զերկոսին եղբարսն, ոչ գիտեմ թէ վասն էր, և ետ զիշխանութիւնն երից որդւոց նոցա Կուառայ և Մեղտեայ և Հոռենայ։ Իսկ Կուառ շինեաց զաւանն Կուառս, և վասն անուան նորա կոչեցաւ Կուառս։ Իսկ Մեղտէս շինեաց 'ի դաշտի անդ իւր աւան, և կոչեաց զանուն նորա Մեղտի։ Իսկ Հոռեանն շինեաց իւր աւան 'ի գաւառն Պալունեաց, և կոչեաց զանուն նորա Հոռեանս։

Եւ յետ ժամանակաց խորհուրդ 'ի մէջ առեալ Կուառ և Մեղտէս և Հոռեան, ելեալք 'ի լեառն Քարքեայ, և գտին զայն տեղին բարեհամ և գեղեցիկ. զի ընդարձակութիւն էր որսոց և հովասուն, խոտոյ և փայտի առատաձեռն. և շինեցին անդ դաստակերտս։ Եւ կանգնեցին երկուս կուռս, զմիսն յանուն Գիսանեայ, և ըզ-

1 Օրինակ մի ի մէջ ելէք... փոխարէնս հատուցանեմք ձեզ։ Եւ հանեմք զվրէժս մեր։

2 Օրինակ մի եղբարք մեռանց։

3 Օրինակ մի մարդապուր։

մինն յանուն Դեմետրեայ։ Եւ եռուն նոցա 'ի սպասաւորութիւն զաղգս իւրեանց։ Գիսանէս զի գիսաւոր էր, և վասն այնորիկ նորա պաշտօնեայքն գէպք էին թողեալ՝ զոր հրամայեաց իշխանն կարել։ Զի ազգն այն յորժամ 'ի Քրիստոս դարձան, չէին կատարեալ 'ի հաւատսն, և զհայրենի օրէնսն չիշխէին յայտնի ունել, այլ խաբէութեամբ զայս հնարեցան. ծամ միայն թողուլ 'ի գլուխ մանկանցն, զի զայն տեսեալ՝ յիշեսցեն զպաշտօն պըղծութեան իւրեանց։ Զոր և ես աղաչեմ զձեզ, զդոյլ կացէք՝ զի մի՛ այս և 'ի ձերում երկիրդ սերմանեսցի, և մի՛ լինիցիք ընդ անիծիւք։ Այլ մեք յառաջինն դարձցուք 'ի կարգս և 'ի բանս։

Իբրև հիմնարկեաց սուրբն Գրիգոր զեկեղեցին, և եդ անդ զնշխարսն, և կանգնեաց անդ փայտեայ նշան տէրունական խաչին 'ի դուռն եկեղեցոյն և 'ի տեղի կռոցն Գիսանեայ, և եթող անդ պաշտօնեայս եկեղեցոյն զՄնատոն և զկրօնիդէս։ Եւ զեպիփան հայր հաստատեաց վանայ ընդ ձեռամբ իւրով. և եթող 'ի տեղոջն արս կրօնաւորս քառասուն և երեք, և երկոտասան դաստակերտս ետ նմա, զի տեղեացն ծառայեսցեն։ Յորոց մինն կուառս, և Մեղոի և Բրեխ և Մուշ և Խորնի և Կեղք և Բուզու [1]։ Քանզի աւանք են սոքա մեծամեծք, որպէս կայ 'ի գրի իշխանացն մամիկոնենից։ Քանզի Կուառս ունէր երդահամարս երեք հազար և երկոտասան, և հեծեալս հազար և հինգ հարեւր։ Եւ Ցում [2] ծուխս ինն հարեւր, և հեծեալս չորեք հարեւր։ Եւ Խորնի ունի ծուխս [3] հազար իննհարեւր և վեց. հեծեալս եւթնհարեւր [4], և հետևակս հազար և եւթն։ Իսկ Բերեխ [5] ծուխս հազար վեցհարեւր և ութսուն. հեծեալս հազար և երեսուն, և հետևակս չորեք հարեւր [6]։ Իսկ Կեռեղք [7] երդս հազար և վեցհարեւր, և հեծեալս ութ հա-

1 Օրինակ մի Պարէխ որ է Բոէխ, և Խրպոմ որ է Տոմ, և ՀԿԷՊՂԷ որ է Կեղ, և ՀԲՈՂՐՈՄ որ է Բուզու։

2 Յերկուս օրինակս Տոմբ. յայլում օրինակի Խրպոմ։

3 Յերկուս օրինակս է Խրպնի երդս հազար և այլն. յայլում Խոհրնի։

4 Յերիս օրինակս հազար եւթն հարեւր. յայլում հազար ոմն։

5 Յերկուս օրինակս Պարէխ երդս։

6 Յերիս օրինակս հեծեալս ոմն հարեւր, և հետևակս վեցհարեւր։

7 Ի միում օրինակի Կեռղէ։

բեւր, և հետևակս վեցհարեւր։ Իսկ Բուզու[1], որ թարգմանի բաղմայ կայեան, ծուխս երեքհազար և երկու հարեւր, և հեծեալս հազար և քառասուն, և հետևակս աղեղնաւորս ութհարեւր և քառասուն[2]. և տիգաւորս վեցհարեւր և ութսուն. և պարսաւորս երկերիւր և ութսուն։ Եւ ընդարձակեալ ունէին սոքա իւրեանց խաշանց արօտականս զգաւառն Հաշտենից։ Արդ այս աւանագեղք 'ի բնէ տուեալ էին կռոցն 'ի ծառայութիւն, զոր և իշխանքն դարձեալ հաստատեցին 'ի սէր եկեղեցոյն յամս երեսուն և երկու թուով[3]։ Զայս այսպէս կարգեալ է սրբոյն Գրիգորի։

Արդ յետ երկոտասան աւուր երթեալ իշանէաք 'ի քաղաքագեղն Մեղտի՝ և անդ երեկօթս արարեալ, և 'ի մէջ գիշերին եկն այր մի, և գոյժ էարկ՝ եթէ արք հիւսիսոյ գան 'ի վերայ մեր։ Իսկ մեք դէմ եդեալ կամէաք անցանել յայնկոյս գետոյն յամրոց մի կոչեցեալ Թարձենք[4]։ Եւ իշխանքն անցեալ գնային մինչև 'ի դուռն Մուշ քաղաքին. և տեղեկացեալ զի ոչ ինչ գոյր, և ապա դարձան և եկին ընդ առաջ մեր. և դարձուցեալ զմեզ յեզերացն Արածանու, ոմանք անցեալ մտին 'ի քաղաքն յառաջագոյն. իսկ ոմանք ընդ մեզ երթային։ Իբրև հեռացաք 'ի գետոյն իբր ձիոյ արշաւանօք երկու կամ երեք, և իբրև մերձեցաք առ փոքր ձորակին, և կամէաք անցանել միաբան և գնալ 'ի տեղի մեհենիցն, քանզի անդ իսկ էր խորհեալ դնել զմնացեալ նշխարսն, ապա ջորիք կառացն յայն կոյս ձորոյն ոչ կարացին անցանել, և նստան։ Ապա հրեշտակն յայտնեալ՝ արգել զԳրիգորիոս, և ասէ. Հաճեցաւ տէր սրբոյդ բնակիլ 'ի տեղւոջս յայս, և այն՝ վասն ցուցանելոյ 'ի հեռագոյն տեղեաց անդի զզօրութիւնն Աստուծոյ, զոր տեսեալ մարդկան՝ հաւատացցեն զքանչելեացն։ Բան զայս այլ պատճառս 'ի սրբոյն Գրիգորէ ոչ լուաք։

1 Յերկուս օրինակս Բաղում։

2 Յերիս օրինակս հեծելս երիս հազար և քառասուն, և հետևակս աղեղնաւոր. Էնինհարէր և քառասուն։

3 Յերիս օրինակս 'ի վերայ էիեղեցոյն յամս և Բ Բուռով. յայլսում օրինակի յամս. և 'ի միւս այլ յամս երեսուն և ութ։

4 Յօրինակի միում Հովէանք։

Եւ անդ ձեռն 'ի գործ արկեալ շինուածոյ եկեղեցոյն, և նոյն օրինակաւ 'ի գիշերի կազմեցաք զտեղի նշխարացն. և եդաք 'ի քարեայ տապան առնաչափ[1] զերկուց վկայիցն մերձ առ դուռն եկեղեցւոյն յաջակողմն։ Եւ զմիւս ևս զակն լուսաւոր դնէր 'ի նոյն տապանին, յաղագս միշտ լուսոյն զոր ունէր։ Բայց զորս եդն, այս են. զՍիմանագինէին զհասարակն, և զկարապետին զսկերս բարձուցն ձախոյ, և զերկու սրունսն, և զմասն ինչ ոսկերաց ողին։ Իսկ զայլն 'ի Կեսարիա առին իւրեանց մասն, զերկուս ոտսն և զահեակ բոյթն։ Արդ իբրև եդաք 'ի ներս 'ի տապանն զնշխարսն նոյնչափ խորութեամբ որպէս յիննակնեան տեղին, և ծունր կրկնեալ սրբոյն Գրիգորի մեք հանդերձ, զնոյն աղօթս մատուցանէր առ աստուած, զի մի ոք յանդգնեսցի առ 'ի հանել զնոսա։ Եւ նոյնպէս եկն ձայն յերկնից, եթէ զոր ինչ խնդրեցեր՝ եղիցի, և ոչ ոք կարէ դատանել զդոսա։ Եւ զայս ասացեալ խաղաղացաւ տեղին 'ի մէջն. և յայտնի է նշանաւ բևեռով փափագողացն իրքն։

Արդ որ զկնի այսոցիկ է՝ զայն թողաք այլոյ պատմագրի, մինչև դարձեալ կրկին դառնայ պատմութիւնըս 'ի Տարօն. զի որպէս զայլ տեղեացն չեմ ինչ գրեալ նոյնպէս և զիմն չիշխէ ոք գրել[2]. զի թագաւորաց ժամանակագիրք են։

Այս պատճէն առաջին պատերազմին Արձանին, և որ ինչ գործեցաւ յաւուրս իմ։

1 Զերկուս օրինակս 'ի փարեղէն փապանի առանցինն։

2 Զերկուս օրինակս զի որպէս զայլ տեղեաց չեմ ինչ գրեալ 'ի Բղնի, նոյնպէս և այլն զիս չիշէն։ Միւս այլ. նոյնպէս և այլ զիմս չիշէն։

ՊԱՏՃԷՆ ԵՐԿՐՈՐԴ

ՎԱՍՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՈՐ ՅԱՐՁԱԿՆ ԵՂԵՒ[1]

Ի ժամանակն յայնոսիկ լուր եհաս 'ի դուռն արքայի՝ թէ Կոստանդիանոս կայսրն հաւատաց 'ի Քրիստոս աստուած, և դադարեցոյց զհալածումն եկեղեցեաց, քաջութեամբ կալեալ զթագաւորութիւնն։ Ապա խորհուրդ 'ի մէջ առեալ[2]՝ գնալ 'ի դուռն կայսեր վասն գնելոյ դաշինս խաղաղութեան 'ի միջի իւրեանց, եկին հասին 'ի գաւառն Ապահունեաց 'ի քաղաքագեղն Մանծկերտ[3]։ Աբքայն հիւսիսոյ զօրս գումարեալ, եկն 'ի վերայ իշխանին Վրաց. և զնա փախստական արարեալ, բերին մինչև 'ի կարնոյ քաղաք։ Եւ զերկիրն գերի վարեալ, տարան ոգիս իբրև քառասուն և ութ հազար։ Իբրև եկն պատգամաւորն Վրաց իշխանին առ թագաւորն Տրդատ, և խնդրեալ իւր զօր յօգնականութիւն՝ զի մի տացէ զերկիրն տանել, և թագաւորն Տրդատ տուեալ երեսուն հազար արանց 'ի ձեռն իշխանին Ապահունեաց, և արձակեաց յօգնականութիւն Վրաց իշխանին։ Որք երթեալ ամսօրեայ ժամանակս յամեցին. և սակաւ մի գերութիւն դարձուցին. և երեք իշխան ըմբռնեցին և ածին։ Եւ կողմնապահ թողեալ երկրին, և ինքեանք դարձան առ թագաւորն։

Իսկ իմ աղաչեալ զսուրբն Գրիգոր գնալ 'ի վանսն իմ, զոր ինքն հիմնարկեաց յանուն սրբոյ Կարապետին. զի կայր լոկ միայն հիմնարկեալ։ Զոր թագաւորն իսկ յանձին կալեալ գալ 'ի տեսութիւն տեղեացն՝ զոր հիմնարկեաց, և եղեալ յԱշտից[4] տեղեացն թագաւորն ընդ լեռնակողմն գնայր։ Քանզի ոմանք տեսեալ զզօրսն

1 Օրինակ մի Պատճէն երկրորդ պատերազմին Գալոյն Գէորգեհոնի փառաւոր հաղար արամբ Վերայ արքային Հայոց Տրդատայ։

2 Օրինակ մի յաւելու արքային Տրդատայ։

3 Յերիս օրինակս Մանազկերտ։

4 Յերիս օրինակս 'ի դաշտից գեղեացն։

ցունաց, համբաւեցին՝ թէ իշխանքն հիւսիսոյ թագաւորին ծանր զօրաք գան 'ի վերայ. քանզի Տրդատ բազում գաւառս և քաղաքս էր զնոցա քանդեալ, և վաթսուն հազար արս 'ի գերութիւն իկուցեալ 'ի Դուին։ Իբրև տեղեկացաւ՝ թէ ցունաց զօրքն էին, դարձաւ 'ի գաւառն Հաշտենից. և եկն բանակեցաւ 'ի գլուխ Արձանին վասն ընդարձակութեան վայրուցն։

Իբրև եկաք 'ի տեղին իննակնեան թագաւորաւն հանդերձ, խնդիր արարաք Անտոնի և Կրօնիդեայ։ Իսկ պաշտօնեայքն ասեն. Այս ամ մի է, սակաւ ինչ պակաս, մեք զնոսա չեմք տեսեալ։ Եւ տրտմեցաւ յոյժ թագաւորն, զի 'ի վաղնջուց ցանկայր տեսանել զնոսա։ Իսկ սուրբն Գրիգոր առաքեաց խնդրակս զԱղբիանոս եպիսկոպոս հանդերձ երկու սարկաւագաւք, պատուէր տուեալ նմա՝ եթէ ընդ առաւօտն ելանեն յանտառէն 'ի բլուրս ուրեք, և դու անդ կաց զգոյշ, զի մի զքեզ տեսցեն և փախիցեն։ Եւ զաւուրս չորս ոչ կարացին գտանել. իսկ 'ի լուսանալ հինգերորդ առաւօտուն՝ լուան զձայն սաղմոսերգութեան նոցա, զի գայր յանտառէն յարևմտից կուսէ 'ի քաղցրահամ [1] աղբերէն։ Եւ եկեալ 'ի բլուրն արևելեան 'ի տեղիս արարոցն Դեմետրեայ, զոր կոչեմք Արևու բլուր [2]. զի և անդ իսկ էին դարափոսք խուցք [3] նոցա, 'ի կողմանէ արևելից. և իբրև մերձեցան 'ի վերայ աղբերն, սկսան սաղմոսել այսպէս. «Լսելի արա ինձ, տէր, առաւօտու զողորմութիւնս քո»։ Իսկ Աղբիանոս ասէ. «Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ»։ Եւ աղօթեալ անդ, ասէ Անտոն ցԱղբիանոս. Բարի եկիր ճանապարհորդ խաղաղութեան։ Եւ նա ասէ. Բարուք գտաք զձեզ օթեվանք սրբոյ Հոգւոյն, և ճրագք լուսոյ։ Այլ և աւետիք ձեզ, զի սուրբ Գրիգոր և Տրդատ թագաւորն 'ի բնակութիւնս ձեր են եկեալ, և յոյժ խընդրեն զձեզ։ Իսկ նոքա ասեն. Եւ ձեզ աւետիք, զի սատանայ կործանեցաւ, և աստուած այսօր կրկին ուրախութեամբ լցոյց զարարածս իմամբ սուրբ Հոգւոյն [4]։

1 Օրինակ մի ի Բարէհամ։
2 Յերիս օրինակս Արևոյ Բլուր։
3 Յերիս օրինակս գարափորք խորոյ նոցա։
4 Օրինակ մի ուրախութեամբ լցեալ զհոգին սուրբ առաքեաց ի վերայ աշխարհիս Հայոց։

եւ կոչեցաւ տեղին այն Աւետեաց բլուր։ Եւ առաքեաց Աղբիանոս առ մեզ ղերկուս սարկաւագսն աւետաւորս. զոր լուեալ մեր, յոյժ ուրախ եղաք։ Եւ դարձեալ զնոյն սարկաւագունսն առաքեաց սուրն Գրիգոր աւետաւորս առ Տրդատ 'ի ստորոտ Արձանին. որ յոյժ խնդութեամբ լցեալ, եկն 'ի վանսն հանդերձ դլխաւոր իշխանօքն։ Իսկ 'ի տեղին, ուր զաւետիսն եառն, հրամայեաց վէմքս ժողովել բլրաձեւս, և կանգնեաց անդ նշան խաչի. զոր և կոչեմք Աւետեաց խաչ[1]։

Եւ առեալ սրբոյն Գրիգորի զդասս պաշտօնէիցն, և զնշան տէրունական խաչին, հանդերձ ջահիւք և անուշահոտութեամբ խնկոց և պաշտամամբք. որ և ձայն ուրախութեան պաշտօնէիցն զանտառն հնչեցուցանէր։ Եւ մերձեալ 'ի բլուրն, ընդ առաջ եղեն մեզ. և միաբան 'ի բլուրն ելեալ աղօթեցաք։ Եւ յետ ողջունին, ասէ սուրբն Գրիգոր. Բարիոք գտաք զձեզ առաւօտք խաղաղութեան։ Իսկ նոքա ասեն. Բարի եկիր արուսեակդ արդարութեան, որ զտիեզերս լուսաւորես. մշակ առանց ամօթոյ, և աշտարակ բարձրագոյն քան զերկինս։ Եւ բազում անգամ համբուրեալ զմիմեանս, և առեալ զնոսա՝ գայաքյեկեղեցին. զի ոչ էր բլուրն հեռի 'ի տեղւոյն, այլ սակաւ մի 'ի բացեայ 'ի հիւսիսոյ կողմանէն, և ինքքն հայի ընդ արևելս, բարեհամ և դիտանոց երևակ բազում վայրուց։ Իբրև ածաք զնոսա առ թագաւորն, և նա արտասուեալ՝ աղօթէր օրհնիլ 'ի նոցանէ. և յաւուցեալ համբուրեաց զնոսա, և նստան առաջի վկայարանին։ Եւ բազում վարդապետութեամբ խօսէին ընդ նոսա, և ուսուցանէին զսրբութեան կրօնս։ Եւ կացեալ անդ աւուրս հնգետասան, թագաւորն 'ի նոյն տեղին կանգնէր զտէրունական նշան մեծանդամ քարակոփ, 'ի տեղի տաճարին՝ ուր Գիսանէան էր, առաջի աղբերն՝ ուր զբժշկութիւն հիւանդացն կատարէր։ Եւ յորժամ կանգնեաց զսուրբ խաչն, տօն ուրախութեան կատարեցին. և ամենայն բազմութիւն ժողովրդոցն, որք կուտեցան 'ի տեղեաց տեղեաց, եղեն թուով արք հարեւր հազար չորեքարեւր և յիսուն։ Թող զչօրս թագաւորին

1 Ցերիս օրինակս առեալ եղաք։

և զպաշտօնեայս սրբոյն Գրիգորի. քանզի թագաւորն հրամայեաց թուել, և զթիւն 'ի բուն խաչին եւ գրել, զի լիցի վկայ ազգաց անցելոց յետ ժամանակաց։

Եւ իբրև կատարեցին զպաշտօն աւուրցն, եկին հասին զօրքն՝ որ 'ի Վիրս էին՝ առ թագաւորն, և ածին ընդ ինքեանս երիս իշխանս և չորեքհարիւր այր ընդիր։ Զոր տեսեալ թագաւորն, ուրախ եղև յոյժ, և գոհացաւ զաստուծոյ՝ որ ետ 'ի ձեռս իւր զթշնամիսն իւր. և առեալ զնոսա՝ արձակեաց կապեալս յամուրն Ողկան։ Եւ ինքեանք յառաջեալ գնացին, բազում՝ աւուրց օթևանօք զանց առնէին, մինչև հասին 'ի Հռոմ քաղաք. և անդ կացեալ սակաւ աւուրս, դարձան մեծաշուք պատուով։ Եւ բազում ուրախութեամբ գային հասանէին յեկեղեցաց գաւառն, 'ի Թիլն աւան. և յետ երից աւուրց եկեալ անտի, գային հասանէին ընդ գաւառն Պալունեաց. և երկուս աւուրս մնացին 'ի մեծ աւանն Հռոնեաց։ Եւ անտի եկին եկին 'ի գեղն Կուառս. և քանզի աշխատեալք էին, հանգիստ առնէին այն օր։

Արդ յորժամ գնացին զօրքն 'ի Վիրսն, և զարձուցին զգերիսն, և զերիս իշխանսն եդին յՈղկան զորս ածին ընդ իւրեանս կապեալս, և ինքեանք թողեալ կողմնապահ զիշխանն Ողձնեաց չորեք հազար արամբ [1]։ Իսկ նորա կաշառեալ 'ի թագաւորէն հիւսիսոյ, առեալ 'ի նըմանէ վաթսուն հազար դահեկան, և գնաց ինքն յերկիրըն Ապահունեաց. զի ամենայն ջանն ենդու թեանն վասն թագաւորին ունելոյ էր։ Զոր ոչ իմացաւ Տրդատ վասն թշնամանացն [2]. և նա զորս փախստականս ըմբռնէր, կապել տայր և 'ի բանակն արկանել։ Եւ այնչափ հըմտութեամբ եկեալ և դիտակօք, որ և զթագաւորն 'ի նեղուց տեղ թակարդեալ։

Բայց առ թագաւորն Տրդատ զօրք որ կային՝ երեսուն հազար միայն էին. և այլն ամենայն երթեալ էին 'ի Մուշն աւան։ Արդ 'ի հասարակել դիշերոյն, մինչ մեք զպաշտօնն մատուցանէաք առաջի սուրբ խաչին, զոր և կանգնեաց հրամանաւ սրբոյն Գրիգորի իշխանն Սիւ-

1 Յերիս օրինակս Ողձնեաց Դռոշ անուն. որ երևի վրիպակաւ սպըրդեալ 'ի համառօտ գրութենէ չորեք հազարին դռ։

2 Օրինակ մի վասն ինքնամեծն. զի զորս փախստականս։

նեաց . զի մինչ Տրդատ զիննակնեանն խաչն կանգնեաց, իշխանն Անգեղ տան զՀոռենիցն կանգնեաց , և Սիւ-նեացն զկուառացն . և սուրբն Գրիգոր երթեալ զխաչն օրհնել, և յերկու աւանսն հիմն եկեղեցւոյ արկանէր։ Արդ 'ի նոյն աւանին 'ի գիշերին պաշտմանն , մինչ դեռ զօրհնութիւն երից մանկանցն կատարէաք և թագաւորն առ մեզ էր ամենայն իշխանաքն 'ի յաղօթել, և չունէաք բնաւ իրացն կասկած , յանկարծակի ձայն ահեղ իբրև ամպոց՝ որ յոյժ դղրդէ՝ եկն եհաս 'ի վերայ մեր։ Զի զսարին կողմ գեղջն պաշարեցին հեռաւակքն , և ըզ-ներքինն հեծեալքն։ Եւ սկսան հնչեցուցանել զփողս պատերազմայ , և թնդիւն սաստիկ շուրջանակի , և ըզ-ձիոց վրնջիւնսն էր լսել։

Եւ սկսան իշխանքն մեր ելանել ընդէմ նոցա 'ի պա-տերազմ. քանզի միջօրեայ էր լուսինն։ Բայց 'ի պատե-րազմէն արգել զնոսա Տրդատ . Այս , ասէ , գիշեր է . և մեք ոչ գիտեմք զչափ զօրուն , թէ ո՞րչափ է համար զօ-րուդ . այլ թէ իմաստութեամբ կամիք առնել, ելէք վեց հազար այր 'ի մէջ այգեստանեացդ 'ի գլուխ Արձանին թագիք մինչև ցառաւօտն, և չորեքհազար 'ի Հաշտե-նից կողմանդ , և չորեքհազար ընդ մէջ նոցա անցեալ գնասցեն առ այգեստանեաքն 'ի վերին դահն , և մեզ ուշ կալցեն։ Բայց տեսէք զի մի զձեզ տեսցեն , և նեն-գութեամբ 'ի փախուստ դարձցին , և 'ի մէջ առեալ՝ վը-տանգեսջիք։ Եւ բաժանեալ արձակեաց զնոսա ուր և խորհեցաւ։

Բայց թագաւորն և Գրիգոր մեւք հանդերձ 'ի փոքր ամրոցին կայաք և աղօթէաք։ Եւ մի ոմն 'ի զօրացն Սիւ-նեաց պատանի մի ըմբռնեաց 'ի հիւսիսականացն , և էած առ թագաւորն։ Եւ իբրև տեղեկացաւ եթէ 'ի քո զօրացդ և իշխանացդ է իրքդ , և այս է թագաւորն հիւ-սիսի Գեղռեհոն , և վասն ունելոյ զքեզ եկեալ է յի-սուն և ութ հազարաւ , և հրամայեաց զօրացն պատ-րաստել զյետին աւուրն մահու պատերազմ։ Եւ իբրև առաւօտ եղև , զօրքն սկսան կազմել փողոցս թագաւո-րին՝ զի յԱրձանն ելցէ։ Իսկ թագաւորն հիւսիսոյ հրա-մայեաց զօրացն զառաջս ունել. վեց հազար սպառա-զինօք արգելուլ կամէր զթագաւորն Տրդատ։ Որոց ե-

կեալ յառաջն, արգելուին զնա 'ի գլուխ Արձանին. և զբազում ժամս ոչ կարացին ելանել 'ի վեր։ Զոր տեսեալ սրբոյն Գրիգորի, յարատաուս եղեալ, և ձայն բարձեալ՝ ասէ. Մկրտիչ և կարապետ Քրիստոսի, տես զինչ գործեն. և հասիր յօգնութիւն, և արա զայս օրս նշանաւոր յաղագս։ Եւ առեալ զնշխարս առաքելոցն՝ զոր բերեալ էր 'ի Հռոմայեցւոցն, տեառնագրեաց 'ի վերայ թշնամեացն։ Եւ առժամայն ոյժ տուեալ Տրդատայ, քաջառնաբար ձայն բարձեալ՝ յօգնականութիւն կոչելով զսուրբ կարապետն, և կարեաց զառաջամ առաջագահիցն [1], և ել 'ի վերայ բլերն։ Եւ ոլք 'ի գիշերին թագուցեալ էին, յարուցեալ 'ի մէջ առին զայն զօրն, և փախստական արարեալ իջուցին զնոսա ընդ հարաւակողմն յանտառն. և որպէս 'ի թակարթ արկեալ, սուր 'ի վերայ եդեալ՝ կոտորեցին. և անուանեցաւ տեղին այն Թակարթս։

Իսկ զօրն Հիւսիսի որպէս դիպող ժամանակ գտեալ, յարձակեցան 'ի վերայ գեղջն. և դեռ հանէին զմեղ յամրոցէն։ Զորս [2] տեսեալ չորեք հազար արանցն, որ 'ի վերայ գեղջն կային, յարձակեալ 'ի վերայ՝ փախստական արարին զնոսա 'ի ներքոյ գեղջն։ Զոր և ոմանք յայգորդացն գլաջարդ առնէին զճակատ երիվարացն, և ոմանք 'ի հեծելոցն 'ի վիմաց անտի մեռան։

Իսկ զօրք մեր ցրուեալ զնոսա ընդ այգեմէջն, սակաւք փրծան. և անկան 'ի տեղջն յայնմիկ վեցհարեւր այր [3] 'ի Թակարթան. իսկ երկու հազար եւթն հարեւր այր [4], և զորս պարսեռոքն [5] կոտորեցին՝ ութ հարեւր վեց. և ընդ ամենայն՝ չորեքհազար երկու հարեւր և երկոտասան այր [6]։

Եւ ապա դարձեալ թագաւորն 'ի փոքր կոտորածէն, ել 'ի գլուխ Արձանին. և հարեալ զազդարար փողն, մինչև ամենայն զօրքն ժողովեցան 'ի մի վայր։ Եւ իբրև

1 Ի չորս օրինակս առաջապահիցն։
2 Յերկուս օրինակս որ փէռէալ։
3 Օրինակ մի արփ հազար Ե վեց։
4 Օրինակ մի երկու հազար երկերիւր Ե մ։
5 Յերկուս օրինակս պարսառորփ. միւս այլ պարսեռպառորփն։
6 Օրինակ մի չորք հազար հարիւր երկոտասան։

եկին հասին 'ի տեղին, և զսուրբն Գրիգոր ի Լուսցին յանդառն, և պահէին զնա արք վեցհարեւր։ Իսկ թագաւորն հիւսիսոյ առեալ զզօրսն իւր, գնաց 'ի Հաշտենից տափարակն. և առաքեաց թուղթ առ Տրդատ՝ թէ եկ 'ի վաղիւն տացուք պատերազմ, և եղիցի օր յաւիտենական 'ի մէջ երկոցունցս. կամ տացես զիշխանսն իմ յիս, և հարկս հնգետասան տարւոյ. ապա թէ ոչ, քանդեմ զերկիրդ քո սրով և գերութեամբ և մահուամբ, որպէս զի ծանիցես զդէմս խոզութեան քո՝ որ եղեր առաջի զօրաց քոց. արդ ըստ այդմ արա զպատասխանիսդ։ Եւ ընթերցեալ զթուղթն, ոչ արարն մեա պատասխանի. այլ յարուցեալ գնաց երեսուն հազար արամբք 'ի պատերազմ, և երթեալ յանդիման նոցա ի Լաւանեցաւ 'ի Մուշեղամարգն Հաշտենից։ Եւ 'ի վաղիւն սկսան ռազմ գործել և ճակատ յօրինել. և փոքրոյս թողեալ պատերազմին դրունս երկու [1], և դռնապահս տեղեացն զբագրատունեացն իշխանն կացուցանէր։ Իսկ զալ թևն զօրուն տայր 'ի ձեռն իշխանին Սիւնեաց, և զահեակ թևն 'ի ձեռն իշխանին Անգեղ տան։ Իսկ զդահերէց իշխանն կացոյց թիկնապահս իւր. և այնպէս յօրինեցան երկոքին ճակատքն, և պատրաստեցան 'ի խումբն։

Իսկ իբրև ամենայն զօրքն սկսան ընդդէմ իրերաց անցանել, ձայն բարձեալ արքայն հիւսիսոյ ասէր. Արքայ Հայոց, ինձ մատիր։ Եւ իբրև եկին ընդդէմ իրերաց, սկսան իբրև զմրճաւորս քարահատաց, կամ իբրև զուռնածս [2] որք պատեն զշանթս հրայրեացս, մինն առնոյր և միւսն իջուցանէր [3]։ Բանզի արքայն հիւսիսոյ մեծահասակ էր և կորովի իբրև զՏրդատ. և բաղում կոփեալ միմեանց, ոչ ինչ եղև։ Բայց ա՛յսաւ պակասիլ արքայն հիւսիսոյ. և գիտացեալ եթէ ՚Ի նասելոց եմ՝, և քանզի ճօպանաւոր էր՝ աճապարեաց և ձգեաց զճօպանն, և արդել զալ թեկն ընդ պարանոցն. և փութանակի դարձաւ և կղթեաց զճօպանն [4], մինչ զի և չկարաց բնաւ շարժել զձեռն Տրդատ։

1 Օրինակ մի ռռ։
2 Յերիս օրինակս իբրև զռառնաւորս՝ մինն առնոյր և այլն։
3 Օրինակ մի իջանէր։
4 Յերիս օրինակս դարձաւ 'ի իրենէ զճօպանն։ Միւս այլ իրենց զճօպանն։

Եւ մտրակեալ զկուշտ երիվարին զկնի Գեղեհոնին, այնպէս փութացեալ մինչ զի ոչ եւ քայլել նմա առաջի իւր տասն քայլ։ Իբրև եհաս նմա, ասէ. Կատարի շուն, խառանեցեր[1] զկնի քո ելացդ։ Եւ ամբարձեալ զաջ ձեռն իւր 'ի վեր, իջուցանէր զսուսերն 'ի վերայ ձախոյ թիկանն Գեղեհոնի, և անցուցեալ ընդ գօտին, և զողն երիվարին հանդերձ գլխովն բաժանեալ՝ յերկիրն ձգեաց։ Եւ այն էր զարմանալի, զի գլուխն և աջ ձեռնն և աջ ոտն ընդ միմեանս, և ողն երիվարին ընդ մէջ հերձեալ թաւալէին։ Զոր իբրև եսես իշխանն Անգեղ տանն 'ի վերայ ածեալ զահեակ թիւն, և ձայն տուեալ ասէր. Իշխան Սիւնեաց, 'ի մէջ ած զգունդ այծուցդ, զի անկաւ Հոնն քոյն։ Իսկ նա ընդ մէջ ածեալ՝ եհատ զգօրսն՝ և անցեալ յաջ թեւապետն Հիւսիսոյ, ասէ. Ատեղահաճ[2], ինձ մատիր և մենամարտեսցուք։ Եւ մատեան իրերաց. և աճապարեաց Հիւսիսայինն, և կտրեաց զգլուխ երիվարին Սիւնեաց իշխանին։ Իսկ նորա ածեալ զսուրն, և եհատ զառաջին ոտն երիվարին Հիւսիսայնոյ. և երկոքեան զոյգ 'ի վայր անկան, և բուռն[3] հարեալ զմիմեանց։ Իսկ մի ոմն 'ի ծառայից Սիւնեաց իշխանին մղոն տուեալ, ընկէց զոմն 'ի վայր յերիվարէն. մատուցանէր նմա, ասելով. Արի, տէր, և հեծիր։ Եւ աճապարեալ նստաւ 'ի վերայ նորա. և դարձեալ՝ կտրեաց զգլուխ նորա, ձգեալ 'ի մախաղն, և դարձաւ։ Եւ իբրև եսես իշխանն Անգեղ տան զիրսն որ եղև, և զգօրսն զի փախստական գնային, ապա ձեռն 'ի գործ արկեալ՝ բախեցին զպատերազմունսն ընդ իրեարս[4]. զոր և թագաւորին զհետ մտեալ մինչև 'ի մուտս արեգականն, յանխնայ կոտորեաց որք դիմադարձքն գտան։ Եւ իբրև 'ի նուրբ տեղիսն դիմեալք, օթեվանս ինդրէին առնել առ եղեր գետոյն փոքեր՝ որ անցանէր ընդ գաւառն Հաշտենից, ուր երթայ ընդ արևե-

1 Օրինակ մի խառանեցեր զհետ ելացդ։

2 Յերկուս օրինակս Ասպեղահաճ. յառաջ մատիր. 'ի միում օրինակի Ասպեղահաճ։ Յերիս օրինակս պակասէր Ա մատեան իրերաց. և յերկուս օրինակս փոխանակ այնր պակասէր Ա մենամարտեսցուք։

3 Յերկուս օրինակս բռուռն բռուռն զմիմեանց հարին։

4 'Ի միում ևեթ օրինակի առ իրարս։

լը՝ հիւսիսախառն, և բանակեցան նոքա յայնմ կողմանէն, և սոքա յայսմ կողմանէ։ Եւ իբրև այդն զառաւօտն մերկանայր, պատրաստեցան ճնացեալ զօրքն հիւսիսականացն, և յարձակեցան 'ի վերայ զօրացն Հայոց, և սկսան յանխնայ կոտորել։ Եւ այնչափ յանդգնեալ, մինչ զի զիշխանն Ծոփաց 'ի մէջ առեալ բազմօք պատեցան զնովաւ. և 'ի նեղ արկեալ, մինչ զի աղաղակեաց ասելով. Ո՞ւր ես իշխանդ Սիւնեաց, հաս ինձ 'ի թիկունս. Եւ նորա հասեալ իբրև զարաթռիչ արծիւ, հալածեաց զարան 'ի նմանէ։ Եւ իբրև ետես եթէ խոցեալ էին չարաչար ընդ երանոք նորա, առեալ զձեռանէ նորա՝ տարաւ 'ի բանակն, և անդէն մեռաւ։ Բայց զօրապետն հիւսիսային, որ էր թագուցեալ զկերպարանս իւր, 'ի գիշերին արծարծեալ զճնացեալ իշխանսն գնալ 'ի վերայ արքային, և արարին որպէս խորհեցանն։ Յանկարծակի աճապարեալ 'ի վերայ խորանացն արքայի, կտրեցին զթևսն 'ի միմեանց. և հասեալ 'ի վերայ արքային, խուն մի և ըմբռնեալ էին զարքայն՝ եթէ ոչ էր գունդ մի խուճապեալ Մեհնունեացն արիք, մինչև եկ արքայ 'ի դրասպակս զօրուն հիւսիսոյ։ Եւ դիմահարեալ միմեանց արքայն և զօրապետն, մինչ զի կարեվէր խոցեաց զահեակ թեկնն Տրդատայ արքային. և բարկացեալ մրմռեալ իբրև զառեւծ յարձակեցաւ 'ի վերայ նորա, և հարեալ զգլուխ նորա յերկուս ճեղքեաց, և ինքն առաջի եդեալ զզօրսն՝ փախստական արար և տարաւ մինչև 'ի կողմանս Հարքայ. և այլք ոմանք հետամուտ եղեալ գնացին մինչև 'ի կարնոյ քաղաք։ Իբրև դարձաւ թագաւորն և իշխանքն յԱրձանն, և իջին առ սուրբն Գրիգոր 'ի տեղին՝ ուր սուրբ կարապետն էր, մեծ գոհութիւն ասուծոյ և պատարագս ողջակիզաց մատուցանէին սպիտակ զուարակաց և նոխազաց և բազում գառանց. և աղքատաց բազում ողորմութիւնս առնէին։ Եւ իբրև եկին ժողովեցան զօրքն ամենայն և իշխանքն, և համար արարեալ՝ գտաւ սպանեալ 'ի մերոցս հազար և ութսուն. իսկ 'ի նոցանէ հնգետասան հազար ինն հարեւր քառասուն և երկու։

Իսկ նոքա՝ որք փախստական գնացին մինչև 'ի Հարք, և անդ իշխանն Հարքայ անկեալ 'ի վերայ 'ի վեց տե-

ղիս, կոտորեաց հազար և վեց այր։ Եւ 'ի Վիրս մտեալ 'ի բազում տեղիս կոտորեցին 'ի նոյանէ։ Եւ որ գնացին 'ի գաւառն Իւրեանց, էին վեց հազար. բայց մինչ 'ի Տարօն մտին, յիսուն և ութ հազար էին։ Այս ամենայն գործեցաւ 'ի գալ նոցա 'ի Հռոմայ. բայց եղև 'ի ձեռն նենգաւոր իշխանին Աղձնեաց։ Զոր իբրև կացին աւուրս երիս 'ի տեղին ինենակնեան, և ապա միաբան խաղացին գնացին 'ի գաւառն Ապահունեաց, ընդ ինքեանս տանելով զիշխանն՝ որք էին 'ի բերդն Ողկան. և զչորեքարեւր արսն 'ի դիւանն արքունի տայր արկանել։ Եւ իբրև հասաք զօրացն, զոր յառաջն էր յուղարկեալ, հրամայեաց նոցա ունել զիշխանն Աղձնեաց. և ածեալ առաջի, կամէր ծայրատել զոտս և զձեռս նորա։ Զոր արգել սուրբն Գրիգոր 'ի պատուհասիցն. բայց 'ի պատուոյն մերժել հրամայեաց, և վարել 'ի գաւառէն Հայոց։

Զոր և զկնի այսորիկ՝ եթէ կամի ոք իմանալ, յայլ պատմագրէ ծանիցէ. բայց առ 'ի մէնջ այսոքիկ պատասխանի բաւական լիցի ձեզ։ Բայց դուք եթէ գալ կամիք յերկիրս յայս, բարի է երկիրս, և վայրքս անուշօդ [1] և բազմաջուր, դաշտաձև, և շուրջ զլերամբքս բազում ամրոցք։ Երկիրս խոտաբեր և մեղրաբուխ. և որպէս մանանայն իջանէր յերկնից անդ առ Հրեայսն, նոյնպէս և ասա 'ի մերում երկրիս 'ի վերայ անտառացս իջանէ քաղցր առաւել քան զմեղր՝ որ կոչի գազապէն։ Նա և այդ երկիրդ խորշակահար է և հացապակաս, և անասուն ոչ բազում 'ի դմա. իսկ այս երկիրս ամենայն բարութեամբ լի է և աջողակ և առողջ։ Իշխանքս կրօնաւորասէրք, և 'ի չարեաց սուրբ, և աղքատասէրք, և որբոց խնամածուք. վերակացուք եկեղեցեաց, և տեսուչք ամենեցունց։ Արդ աղօթիւք ձերովք պահեսցէ տէր զհօտս մեր և զձերդ 'ի խաղաղութիւն շնորհիւ տեառն։

Ողջ լերուք 'ի տէր մեր Յիսուս Քրիստոս։

1 Ցերկուս օրինակս Ա անուշ օդս Ա ջուր բազում։

ՎԵՐՋ

ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ

Ագաթանգեղոս 19. 22:
Ագեենացիք 12.
Աթանագինէ 8. 23. 24. 33. 38:
Ակգենոս 24:
Աղբիանոս 33. 41:
Աղեքսանդրացիք 11:
Աղեքսանդրիա 24:
Աղձնիք 43. 49:
Այծան 35:
Այրարատեան գաւառ 21:
Անակ 20. 21. 33:
Անաստաս 14. 15. 16:
Անգեղ տուն 24–28. 35. 44. 46. 47:
Անգրէաս 14:
Անձևացիք 25:
Անտոն 8. 10. 17. 18. 37. 41:
Աշտիշատ 16. 25. 29. 36. 40:
Աշտից տեղիք, փէ՝ Աշտիշատ:
Ապահունիք 40. 43. 49:
Առաջաւորք 23:
Ասկդնէ 22:
Ասորիք 14. 18. 19. 24:
Աստղօնք 28. 35:
Արածանի 38:
Արեւու բլուր 41:
Արծուիք 29:
Արծրունիք 25. 27. 29. 30:
Արձան լեառն 27. 28. 31. 39. 40–42. 44. 45. 48:
Արձան քուրմ 25. 26. 27. 31:
Արշակունի գուռն 33:
Արշակունիք 19:
Արջուց կամ Արջոյ ձոր 30:
Արտաշ 21:
Արտեան 20:
Աւետեաց բլուր 41:
Աքիկոս 14:
Աքիւղաս 16:

Բազուտ փէ՝ Բուզու:
Բասեան 23. 28:
Բարդ 22:
Բարթուղիմէոս 10:
Բեկտոր 14. 15. 17. 22:
Բիւզանդիա 16. 17:
Բուզանդիա, փէ՝ Բիւզանդիա:
Բուզու 37:
Բուրդար 21. 22:
Բրեխ, փէ՝ Պարեխ:

Գամիրք 21. 22:
Գայիոս 14. 17:
Գեղեհոն 44. 46. 47:
Գիսանէ 8. 15. 16. 25. 27. 31. 32. 34 36. 42:
Գլակ 15:
Գուլթք 22:
Գրիգոր 14. 16. 18. 19. 21–26 31–39. 40–49:

Դաւիթ 22:
Դեկոս 24:
Դեմեար իշխան 35:
Դեմեար կուռք 8. 25. 32. 33. 34. 36. 41:
Դեմեար քուրմ 25. 27. 28. 29. 30:
Դինասքէ 35:
Դիոկղետիանոս 22. 24:
Դկլատիոս 24:
Դուին 24. 41:
Դռով 43:

Եգիպտոս 14. 23:
Եկեղեաց գաւառ 13. 23. 43:
Եղիազար 9. 11. 12. 14. 16. 17. 24:
Եման, փէ՝ Այծան:
Եպիփան 10. 17. 37:
Երէզնաւան 23:
Երուսաղէմ 11. 14. 17. 23:
Եւթաղէ 21. 22:
Եփեսոս 23. 24:

Զենոբ 17. 18. 19։

Թադէոս 10. 21։
Թակարդք 45։
Թարձենք 38։
Թիլն 43։
Թորգան 24։

Իննակնեան տեղիք 8. 13. 15. 31. 41. 43։
Լփինիք 22։

Խոհրնի, փէ՝ Խորնի։
Խոսրով արքայ Հայոց 18. 20. 21. 23։
Խոսրովուհի 22։
Խորնի 37։
Խրանի, փէ՝ Խորնի։
Խրտուռմ, փէ՝ Տուռմ։

Մոփք 48։

Կաճկոնք 35։
Կակադովկայուոց աշխարհ, փէ՝ Գամիրք։
Կարապետ, փէ՝ Յովհաննէս Կարապետ։
Կարին 25. 40. 48։
Կեղք 37։
Կեսարիա. 7. 9. 14. 21. 23. 24. 33. 38։
Կեռեղք, Կեռղէք, փէ՝ Կեղք։
Կոստանդիանոս 23. 40։
Կորնեթոս 14։
Կուառատուն, փէ՝ Կուառք։
Կուառ 36։
Կուառք 25. 26. 35. 36. 37. 43. 44։
Կրոնիդէս 8. 17. 18. 37. 41։

Հայք 8. 16. 17. 23. 27. 28. 29. 47։
Հաշտեանք 12. 25. 29. 37. 41. 44–47։
Հարք 13. 25. 28. 48։
Հեփթաղ 22։
Հեփթաղենակ 22։
Հնդիկք 8։
Հոն 47։
Հոռեան 36։
Հոռեանք 36. 43. 44։
Հովեանք 38։
Հռոմ 11. 14. 16. 17. 23. 24. 49։
Հրեայք 49։

Ղեւոնդ 7. 23. 24։
Ղուկաս 14.

Ճենք 20. 22։

Մամիկոնեայք 8. 9. 13։
Մանծկերտ, կամ Մանազկերտ 40։
Մարիամ 22։
Մարկեղէս, փէ՝ Մարկեղիոս։
Մարկեղիոս 16. 17։
Մեղտէս 36։
Մեղտի 26. 28. 36. 37։
Մենանդրոս 14։
Մեսակէս, փէ՝ Մեռակէս։
Մեռակէս 29. 30։
Մեռասակող, Մեռասակողմ 30։
Մեհնուենիք 48։
Միջագետք 14. 17։
Մկրտիչ, փէ՝ Յովհաննէս Կարապետ։
Մոկք 26. 30։
Մովսէս 10։
Մուշ 37. 38. 43։
Մուշեղամարդ 46։

Յակոբ ասորի (Մծբնայ) 9. 22։
Յոյնք 16. 22. 40. 41։
Յոհաննէս աւետարանիչ 23։
Յովհաննէս Կարապետ 8. 10 13. 15. 23. 24. 31. 33. 35. 38. 40. 48։
Յորգանան 8։

Նիկիմաքոս 22։
Նիւսորա 24։
Նիւսորացիք 12։

Ոգոհի 21։
Ողկան ամուրն 26. 43. 49։
Ուռհա, կամ Ուրհա 14. 22։

Պաշհաւ 20։
Պաշհաւայ գուռն 8։
Պաղունիք 25. 36. 43։

Պատմոս 23։
Պարթեւ 20. 21։
Պարսք 20. 21.
Պարտաթ 30։
Պարտաւ 20. 21։
Պիսիդոն ասորի 33։
Պոլիկարպոս 24։

Ջուանշիր 22։

Ռեգէս 22։
Ռըստակէս 22։

Սգօն, փէ՝ Ցակոբ։
Սեբաստիա 24։
Սեղբեստրոս 23։
Սիմաքոս 17։
Սինա 10։
Սիւնիք 26. 27. 29. 30. 34. 35. 43. 44. 46. 48։
Սուրէն 21։
Սուրխինոս 25։
Սոփի 21։

Վաղարշակ 36։
Վաղարշապատ 21. 23։
Վիշապ քաղաք 28. 36։
Վիրք 40–43. 48։
Վրթանէս 22։

Տարօն 12. 14. 16. 25. 36. 49։
Տաւրոս լեառն 8։
Տիմոթէոս 11. 14. 17։
Տիրակատար 28։
Տիրան 22։
Տուտ, Տուտք 37։
Տրդատ 12. 14. 16. 22. 23. 40–49։

Փայտակարան 35։
Փարաւոն 10։
Փարմեղոս 24։

Քարքէ 36։